# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 35 (1535) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 2011
VOLUME 31, NO. 35 (1535) SATURDAY, OCTOBER 1, 2011

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


**ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ**

## ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

**ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Մինչ կը սպասուէր ՄԱԿի գլխաւոր նստաշրջանի կայացումը Նիւ Եորք, ուր ներկայ պիտի գտնուէր եւ ելոյթ ունենար Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգիսեան՝ Գալիֆորնիահայ համայնքի բաղկացուցիչ ազգային քաղաքական, բարեսիրական ու կրօնական միաւորները, իւրայատուկ նախաձեռնութիւններով կը դիմաւորէին Մայր Հայրենիք Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 20-րդ տարեդարձը: Անկախութեան այդ հերոսական ձեռքբերումը կու գար իրագործել մեր ժողովուրդի դարաւոր երազը: Ան կը վերականգնէր մեր ազգային արժանապատուութիւնը: Ճանապարհ կը հարթէր դէպի ազգային դատի արդար կարգաւորման պայքարին առջեւ: Նաեւ, գաղութը ակնկալութիւններ ունէր Նախագահէն, դէմյանդիման գալու, խօսելու եւ լսելու զինք՝ երկրի եւ ժողովուրդի մասին, հայրենիքի Անկախութենէն 20 տարի ետք:

Տեղի ունեցաւ ՄԱԿի համաժողովը: Նախագահը ունեցաւ իր ելոյթը, որուն յաջորդեց Ուրբաթ 23 Սեպտեմբերին իր որակաւոր պատուիրակութեան գլուխը անցած ժամանումը Լոս Անճելըս, ուր յաջորդական երեք խիստ սահմանափակ օրերու ընթացքին ունէր հեւ ի հեւ վազքի կարօտ խիտ յայտագիրի մը ամբողջացումը: Ան պիտի այցելէր Մոնթեպելլօ, ուր ծաղկեպսակ պիտի զետեղէր Ցեղասպանութեան յուշարձանին առջեւ: Կիրակի, 25 Սեպտեմբերին պիտի մասնակցէր՝ «Եունիվերսըլ Հիլթըն»ի մէջ տեղի ունենալիք ներկայացուցչական ժողովի մը, ուր հրաւիրուած պիտի ըլլային հայ գործարարներ եւ աւուր պատշաճի ելոյթ մը ունենալէ ետք պիտի վազէր Սրբոց Ղեւոնդեանց առաջնորդանիստ եկեղեցին, կարճ տեւողութեամբ ներկայ գտնուելու համար Սրբ. պատարագին: Այնուհետեւ յարգելի հիւրը պիտի երթար իր մասնակցութիւնը բերելու «Ամերիա» դրամատան բացման արարողութեան, ապա՝ ներկայ գտնուէր Հայաստանի հիւպատոսարանի նոր շէնքի բացման միջոցառման: Նախագահական եռօրեայ խճողուած յայտագիրը իր աւարտին պիտի յանգէր Հայաստանի Անկախութեան 20-ամեակին նուիրուած հանդիսաւոր ճաշկերոյթով մը, որ տեղի պիտի ունենար Կիրակի 25 Սեպտեմբերի երեկոյեան:

Եթէ ուշադրութիւն դարձուի

Շար.ը էջ 18

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԸՍԻ ՄԷՋ



Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի նոր հիւպատոսարանի բացման ընթացքին

Անցնող շաբաթավերջին Լոս Անճելըս այցելեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան: Ստորեւ այցելութեան մանրամասնութիւնը, Նախագահի մամլոյ գրասենեակի հաղորդագրութեան համաձայն:

Աշխատանքային այցով ԱՄՆ գտնուող Նախագահ Սերժ Սարգսեան Նիւ Եորքէն 24 Սեպտեմբերին աշխատանքային այցով մեկնած է Լոս Անճելըս:

Այցի առաջին օրը ան Մոնթեպելլօ քաղաքին մէջ գտնուող Հայոց Ցեղասպանութեան յուշահամալիրին մէջ ծաղկեպսակ դրած է Մեծ Եղեռնի զոհերու յիշատակը յաւերժացնող կոթողին ու ծառ տնկած է յիշատակի պուրակին մօտ:

25 Սեպտեմբերին Սերժ Սարգսեան մասնակցած է ՀՀ Կեդրոնական Դրամատան եւ Հայաստանի դրամատուներու ընկերակցութեան կողմէ կազմակերպուած տնտեսական համաժողովի բացման, որուն մասնակ-

Շար.ը էջ 5

## ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՐԹԸ ԲԱՑԱՅԱՅՏԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՕՐԱՀԱՆԴԷՍԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Հայաստանի զենիթահրթիռային C-300 համա-կարգերը

«Օրուժիյէ Ռոսիի» ռուսական թերթը անդրադարձած է Սեպտեմբեր 21-ին Երեւանի մէջ տեղի ունեցած զօրահանդէսին, որ նուիրուած էր Հայաստանի անկախութեան 20-ամեակին:

«Սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը կը տօնէր անկախութեան օրը: 20 տարի առաջ հռչակուած է Հայաստանի անկախութիւնը: Այդ օրը Երեւանի՝ Հանրապետութեան հրապարակին վրայ, տեղի ունեցաւ նորագոյն պատմութեան մէջ մասշտաբային ռազմական շքերթը»,- կը գրէ թերթը:

Ռուսական թերթը կը յայտնէ որ, «ժողովուրդին ցուցադրուեցան զենիթահրթիռային C-300 համակարգերը, «Տոչկա-Ու» տակտիկական հրթիռային համա-կարգերը»:

«Զօրահանդէսի գլխաւոր

Շար.ը էջ 4

## ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՄԼՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Հայաստանէն արտագաղթի ցուցանիշները վերջերս սկսած են արժանանալ նաեւ միջազգային լրատուական միջոցներու ուշադրութեան: Բրիտանական BBC-էն յետոյ, ֆրանսական AFP մամլոյ գործակալութիւնը յօդուած մը հրապարակած է, «Հայկական արտագաղթի հետեւանքով կը ձեւաւորուի միայն կիներէ բաղկացած գիւղեր» վերնագրով:

Օրինակ բերելով Վանաձոր քաղաքի մօտակայ գիւղերը, ուր բերքահաւաքի ժամանակ կարելի է միայն կանանց եւ երեխաներու տեսնել: Անոնց հայրերն ու ամուսինները մեկնած են Ռուսաստան՝ գումար վաստակելու նպատակով:

Կանայք յայտնած են, որ իրենց գիւղերուն մէջ ամբողջութեամբ մայրիշխանութիւն է: Շատերը կը վախնան, որ իրենց ամուսինները կրնան դարձել ամուսնանալ Ռուսաստանի մէջ եւ մնալ այնտեղ ընդմիշտ:

Յօդուածը կը նշէ, որ ՄԱԿ-ի Ֆոնտի տուեալներով, տարեկան 25-30 հազար մարդ կը լքէ Հայաստանը, որը բացասաբար կ'անդ-

Շար.ը էջ 4

## ԾԵՐԱԿՈՅՏԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ



Ամերիկայի նորանշանակ դեսպան Ճոն Հէֆըրն

Միացեալ Նահանգներու Ծերակոյտը միաձայն հաստատեց Նախագահ Պարաք Օպամայի կողմէ առաջարկուած՝ Ճոն Հէֆըրնի թեկնածութիւնը, որպէս Հայաստանի մէջ Ամերիկայի դեսպան:

Սեպտեմբեր 13-ին, Հաֆըրնի թեկնածութիւնը հաստատած էր Ծերակոյտի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովը:

Ճոն Հեէֆըրն փորձառու դիւանագէտ է, որ մինչ այժմ կը զբաղեցնէր ՆԱԹՕ-ի մէջ ԱՄՆ

Շար.ը էջ 4

# ՓՈՒԹԻՆԸ ԿԸ ԲԵՐԻ՞ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

Ռուսաստանի Դաշնութիւնում «Նախագահ 2012» օպերացիայի հանգուցալուծումից յետոյ Հայաստանում թեւածում է հարցը, թէ Փութինի վերադարձը ինչ ազդեցութիւն է ունենալու Հայաստանի ներքաղաքական կեանքի վրայ, յատկապէս այն գիտակցումով, որ Ռուսաստանն այդ կեանքի վրայ միշտ ունեցել է առարկայական ազդեցութիւն, իսկ յաճախ նաեւ՝ պարզապէս գործուն մասնակցութիւն:

Ինչ է լինելու Հայաստանում հարցն ի հարկէ շատ յաճախ հնչում է այլ կերպ, կամ ունենում է շատ յստակ ենթատեքստ՝ արդեօք Ռուսաստանում Փութինի վերադարձը Հայաստանում նշանակելու է Ռոբերդ Քոչարեանի վերադարձ: Այդ տեսանկիւնից, ի հարկէ յատկանշական է այն, որ վերջին շրջանում Հայաստանում Ռոբերտ Քոչարեանը ցուցաբերում է գգալի ակտիւութիւն, ի հարկէ առայժմ անուղղակի, հիմնականում քարոզչական իմաստով: Բայց, յատկանշական է, որ թերեւս առաջին անգամ բաւական անկեղծացել էր Ռոբերտ Քոչարեանի շրջապատի ներկայացուցիչ համարուող կամ առնուազն ընկալուող Վարդան Օսկանեանը, ով յայտարարել էր, որ Քոչարեանը հաւանաբար ներգրաւուածութիւն կ'ունենայ խորհրդարանի ընտրութեանը: Այդպիսի հարցերում սովորաբար զգուշաւորութիւն ունեցող Վարդան Օսկանեանը միշտ դիւանագիտօրէն խուսափել է խօսել Քոչարեանի քաղաքական ծրագրերի մասին, մինչդեռ այժմ բաւական թափանցիկ ակնարկել է դրանց ընդհանուր պատկերը:

Հետաքրքրական էր նաեւ Հայ ազգային կոնգրէսի վերջին՝ Սեպտեմբերի 23-ի հանրահաւաքում կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը, երբ նա յայտարարեց, թէ ինքը դրա նախորդ հանրահաւաքում ասել է, որ Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին Հայաստանի ներքաղաքական կեանքի հանգուցալուծման առումով բեկումնային իրադարձութիւն է լինելու: Տէր-Պետրոսեանն այդ առումով Սեպտեմբերի 23-ին յայտարարեց, որ Սեպտեմբերի 30-ին նշանակուած յաջորդ հանրահաւաքում հանրութիւնը ականատես կը լինի. «Ինչպէս նշել եմ իմ նախորդ ելոյթում, Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին Հայաստանի քաղաքական ճգնաժամի յաղթահարման հարցում լուրջ բեկում կամ վերջնական յստակեցում է տեղի ունենալու: Այս պնդման հաւաստիացումը դուք կը ստանաք յաջորդ հանրահաւաքում, որը կը կայանայ Սեպտեմբերի 30-ին»:

Արդեօք Տէր-Պետրոսեանը նկատի ունէր Ռուսաստանում տեղի ունեցած հէնց այդ հանգուցալուծումը եւ դրանով պայմանաւորուած Ռոբերդ Քոչարեանի ակտիւացումը: Հետաքրքրական է, որ իր ելոյթի ընթացքում Լեւոն Տէր-Պետրոսեանը որեւէ կերպով չանդրադարձաւ Ռուսաստանին, թէեւ խօսում էր 2008 թուականի նախագահի ընտրութեան կեղծիքների միջոցով իշխանութեան վերարտադրութեան մասին: Տէր-Պետրոսեանը, ով խօսում էր այն մասին, որ Արեւմուտքը իմացել է կեղծիքի մասին, սակայն ինչ-ինչ շահից ելնելով ընդունել եւ սատարել է Սերժ Սարգսեանին, չյիշատակեց այդ համատեքստում շատ խորհրդանշական մի հանգամանք, որ Սերժ Սարգսեանը առաջինը Մոսկուա գնաց եւ ընտրութեանն իրեն աջակցելու համար շնորհակալութիւն յայտնեց Փութինին:

Սակայն, եթէ Փութինի վերադարձը նշանակելու է Քոչարեանի ակտիւացում եւ վերադարձի փորձ, արդեօք այդ դէպքում կոնգրէսի առաջնորդը կը գերադասի ոչ թէ յիշեցնել Սերժ Սարգսեանի շնորհակալութիւնը Փութինին, այլ պարզապէս նրան կը յայտնի իր աջակցութիւնը Քոչարեանի հնարաւոր վերադարձը կանխելու հարցում եւ կ'անի երկրորդ նախագահի հնարաւոր վերադարձի դէմ համատեղ պայքարի առաջարկ: Արդեօք Տէր-Պետրոսեանը Ռուսաստանի թեման հէնց այդ համատեքստում պահել է հէնց Սեպտեմբերի 30-ի հանրահաւաքի համար: Եւ արդեօք դա նշանակում է, որ Փութինի վերադարձով եւ Հայաստանում Քոչարեանի վերադարձի կամ ակտիւացման հնարաւոր արձագանքով կոնգրէսը անցնելու է այսպէս ասած առաւելապէս արեւմտեան հարթութիւն, ուր, ի դէպ, կարծես թէ արդէն գտնւում է Սերժ Սարգսեանը:

Յամենայն դէպս, հետաքրքրական էր, որ այն օրերին, երբ Ռուսաստանում հանգուցալուծւում էր Փութին, թէ Մեդվեդեւ դիլեման, Սերժ Սարգսեանը գտնւում էր Միացեալ Նահանգներում եւ ստանում «Ներգաղթի» մետալ: Իսկ Նահանգներից յետոյ Սերժ Սարգսեանը մեկնելու է Ֆրանսա, որտեղից էլ Լեհաստան՝ Եւրամիութեան Արեւելեան գործընկերութեան գագաթնաժողովին մասնակցելու համար: Ի հարկէ, արեւմտեան «կորից» յետոյ նախատեսւում է այց Մոսկուա, սակայն խնդիրը տուեալ դէպքում այն չէ, թէ ինչպիսին է Հայաստանի յարաբերութիւնն ու վերաբերմունքը Մոսկուայի հանդէպ, այլ այն, թէ ինչ փոփոխութիւններ են նկատւում Արեւմուտքի հետ յարաբերութեան ուղղութեամբ եւ ինչ միտումներ են առկայ:

Իսկ գուցէ Հայաստանի քաղաքական ճգնաժամի հանգուցալուծման բեկումնային զարգացումը սպասւում է հէնց Սերժ Սարգսեանի արեւմտեան այցի ընթացքում, մասնաւորապէս Միացեալ Նահանգներում եւ Ֆրանսայում, ու Տէր-Պետրոսեանը ինչ որ հանգուցալուծում սպասում է հէնց այդ ուղղութեամբ: Բայց, դա էլ թերեւս կարող է տեղի ունենալ հէնց ռուսական զարգացումների ֆոնին, որովհետեւ եթէ Փութինը լուծելով Մեդվեդեւի հարցը Ռուսաստանում, փորձի Հայաստանում էլ լուծել Քոչարեանի վերադարձի հարցը, ապա դրա հետեւանքով Հայաստանում կարող է թերեւս քաղաքական դաշտում ձեւաւորուել որոշակիօրէն աննախադէպ այսպէս ասած արեւմտամէտ քաղաքական հոսանք՝ Սերժ Սարգսեանի եւ Լեւոն Տէր-Պետրոսեանի մասնակցութեամբ: Չէ որ եթէ Ռուսաստանը ձեռնամուխ է լինում Քոչարեանին վերադարձնելու ծրագրի իրականացման, եթէ ի հարկէ այդպիսի ծրագիր կայ, դրանով նա Սարգսեանին ու Տէր-Պետրոսեանին ստիպում է քաղաքական հեռանկարներ որոնել Արեւմուտքում:

Ի դէպ, չի բացառւում, որ դա Հայաստանի համար լինի իսկապէս հանգուցային, բեկումնային զարգացում, ինչը կարող է իր մէջ կրել համակարգային վերափոխումների տարրեր, Սերժ Սարգսեանին չթողնելով այլ ելք: Այնպէս որ, երեւի թէ լաւ կը լինի, որ Փութինը ձեռնամուխ լինի Քոչարեանի վերադարձի ծրագրին: Միեւնոյն է, այդ ծրագիրն այսպէս, թէ այնպէս, խոշոր հաշուով անիրագործելի է թւում, բայց դրա գործարկումը կարող է Տէր-Պետրոսեանին ու Սարգսեանին մղել ոչ անսովոր քայլերի, դուրս բերելով Հայաստանի ներկայիս իրավիճակին բնորոշ դարձող սովորական իներտութիւնից:

*«ԼՐԱԳԻՐ»*

# ԺԱՄԿԷՏՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՅՍՏԱԿ ԵՆ

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

Հայ Ազգային կոնգրէսի հանրահաւաքում Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը հիմնականում նուիրուած էր Հայաստան-Արեւմուտք յարաբերութիւններին եւ այն հարցին, թէ ինչո՞ւ Արեւմուտքը, հրաշալի տեղեկացուած լինելով, թէ իրականում ինչ է կատարւում Հայաստանում, ինչ է տեղի ունեցել 2008 թ. նախագահական ընտրութիւնների ժամանակ եւ դրանից յետոյ, այնուամենայնիւ աջակցում է Սերժ Սարգսեանին ու նրա ռեժիմին:

Եթէ փորձենք մի քանի նախադասութեամբ ամփոփել Տէր-Պետրոսեանի ելոյթը, ապա հիմնական ասելիքը հետեւեալն էր. Արեւմուտքը լաւ էլ իմացել է, որ Սերժ Սարգսեանը լեգիտիմ չէ եւ չի վայելում հասարակութեան աջակցութիւնը, բայց քանի որ նա խոստացել էր կարգաւորել հայ-թրքական յարաբերութիւններն ու ղարաբաղեան խնդիրը, աջակցել է նրան: Փաստօրէն, Արեւմուտքը սխալ հաշուարկ է կատարել: Նախ՝ որովհետեւ նման հարցերը հնարաւոր չէ լուծել առանց համաժողովրդական աջակցութեան, երկրորդ՝ իշխանութիւնները փաստօրէն սխալ են հասկացել այդ աջակցութիւնը եւ առիթից օգտուելով՝ շարունակել են ոտնահարել ժողովրդավարական ազատութիւնները, ամրապնդել սեփական իշխանութիւնը եւ թալանել երկիրը:

Մի խօսքով, այս իմաստով Տէր-Պետրոսեանի ելոյթն աւելի շատ «մէսիճ» էր՝ ուղղուած Արեւմուտքին: Բայց հարց է ծագում՝ ինչո՞ւ է այդ ելոյթը հնչեցւում անյապաղ վճռական գործողութիւններ պահանջող եւ շուտափոյթ արմատական փոփոխութիւններ ակնկալող ժողովրդի առաջ: Այստեղ անհրաժեշտ է հաշուի առնել երկու հանգամանք: Նախ եւ առաջ՝ ցանկացած քաղաքական ուժի առաջնորդի խօսքը կշիռ ունի ճիշդ այնքանով, որքանով հզօր է այդ ուժի համակիրների բանակը: Երկրորդ՝ միայն առաջին հայեացքից կարող է թուալ, թէ ելոյթում բարձրացուած հարցերն անմիջական առնչութիւն չունեն ժողովրդական զանգուածների ակնկալիքների (անյապաղ իշխանափոխութիւն, սոցիալական խնդիրների լուծում, քրէաօլիգարխիկ համակարգի վերացում եւ այլն) հետ: Իրականում տրամաբանական շղթան ակնյայտ է. ժողովրդավարական ազատութիւնները կը հանգեցնեն նորմալ ընտրութիւնների, նորմալ ընտրութիւնների դէպքում տեղի կ'ունենայ իշխանափոխութիւն, օլիգարխիկ-կլանային համակարգը կը վերանայ, բնակչութեան սոցիալական վիճակը կը բարելաւուի, պետութեան դէմ յանցագործութիւն կատարածները (այդ թւում՝ Մարտի 1-ի ոճրագործները) կը պատժուեն եւ այլն: Պարզ ասած՝ Արեւմուտքին ուղղուած «մէսիճի» իմաստը հասկանալի է. նրանց Հայաստանի ժողովրդավարութիւնն անհրաժեշտ է աշխարհաքաղաքական խնդիրներ լուծելու համար, մեզ՝ երկիրն այս վիճակից դուրս բերելու եւ զարգացման նորմալ ուղու վրայ դնելու համար: Կը ցանկանան աջակցել՝ թող աջակցեն, չեն ցանկանայ՝ հայ ժողովուրդն այսպէս թէ այնպէս «մտադիր չէ հաշտուել սեփական երկրում ոչ օրինակարգ, յանցագործ, անբարեկիրթ ու ամբարտաւան իշխանութիւն ունենալու մտքի հետ»:

Ինչ վերաբերում է յետագայ քայլերին, ապա կասեցուած երկխօսութիւնից յետոյ կոնգրէսն ըստ էութեան Ջրբաժանի հարցը ոչ թէ «չորով» դրեց, այլ, եթէ կարելի է այսպէս ասել, սկսեց գործընթացը՝ ազդարարելով, որ նպատակ ունի ուժեղացնել ճնշումները եւ աւելի յաճախակի հանրահաւաքներ կազմակերպել: Բայց դրան զուգահեռ՝ կոնգրեսը նաեւ իշխանութիւնների համար երկխօսութիւնը վերսկսելու հնարաւորութիւն թողեց. առաջ քաշեց ութ պահանջ,

Շար.ը էջ 19

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $120.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ՊԷՏՔ Է ԱՒԵԼԱՑՆԵՆՔ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ»



Լեւոն Տէր-Պետրոսեան ՀԱԿ-ի հանրահաւաքի ընթացքին

Հայ ազգային կոնգրէսի՝ Ուրբաթ, Սեպտեմբեր 23-ի Ազատութեան հրապարակում անցկացրած հանրահաւաքում Կոնգրէսի առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ հարկաւոր է աւելացնել իշխանութիւնների վրայ գործադրուող ճնշումները:

«Այսօրուանից մենք պէտք է աւելացնենք մեր ճնշումները եւ առաւել յաճախակի ու մարդաշատ հանրահաւաքների, ինչպէս նաեւ զանգուածային այլ միջոցառումների միջոցով ստիպենք իշխանութիւններին՝ կատարելու մեր պահանջները», - յայտարարեց Կոնգրէսի առաջնորդը:

Այդ պահանջները 8-ն են. - «Մինչեւ տարուայ վերջ անցկացնել արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ, ընտրութիւններից առաջ ՀՀ ընտրական օրէնսգրքում կատարել էական փոփոխութիւններ՝ նրանցում ընդգրկելով մեր ներկայացրած յայտնի առաջարկները, առաջիկայ երեք ամիսների ընթացքում բացայայտել 2008 թուականի մարտի 1-ի տասը սպանութիւնները եւ քրէական հետապնդում սկսել դրանց պատասխանատուների նկատմամբ, ազատ արձակել քաղբանտարկեալ Տիգրան Առաքելեանին եւ կարճել Կոնգրէսի եօթ երիտասարդ ակտիւիստների նկատմամբ յարուցուած քրէական գործերը, վերացնել Երեւան քաղաքում փողոցային առեւտրի վրայ դրուած անօրինական արգելքը, չեղեալ յայտարարել Երեւանում տեղադրուած կրպակների ապամոնտաժման վերաբերեալ ընդունուած որոշումը: Դադարեցնել մայրաքաղաքի ճարտարապետական նկարագրի այլանդակումը եւ արգելել Երեւանի կենտրոնում բարձրայարկ շէնքերի կառուցումը, օրէնքով արգելել բարձրաստիճան պետական պաշտօնեաների, Ազգային ժողովի պատգամաւորների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից մամուլի միջոցների եւ լրագրողների դէմ դատական հետապնդումների յարուցման պրակտիկան»:

«Հասկանալի է, որ առաւել դժուարինը առաջին երկու պահանջների կատարումն է», - ասաց Տէր-Պետրոսեանը եւ շարունակեց, - «Ուստի հարկ ենք համարում յայտարարել, որ մենք մաքսիմալիստ չենք, եւ պատրաստ ենք լրջօրէն վերաբերուել այդ առթիւ իշխանութիւնների առաջարկած ցանկացած ողջամիտ փոխզիջման»:

«Ինչպէս նշել եմ իմ նախորդ ելոյթում, Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին Հայաստանի քաղաքական ճգնաժամի յաղթահարման հարցում լուրջ բեկում կամ վերջնական յստակեցում է տեղի ունենալու», - յայտարարեց Կոնգրէսի առաջնորդը:

# «ՔՈՉԱՐԵԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ ԾԱՂԿԱԾՆԵՐԸ ԿԸ ՄԻԱՆԱՆ ՆՐԱՆ»

«Նախընտրական պայքարի միտումները Հայաստանում եւ համագործակցութեան հնարաւորութիւնները քաղաքական ուժերի միջեւ» թեմայով Սեպտեմբեր 26-ին քննարկմանը «Ժառանգութեան» պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանը կարծիք յայտնեց, որ եթէ Ռոբերդ Քոչարեանը վերադառնայ քաղաքականութիւն, այն ուժերը եւ անձինք, որոնք նրա նկատմամբ ունեն անձնական համակրանք, կ՚անցնեն Քոչարեանի կողմը: Հարցին, թէ ովքե՞ր են այդ ուժերը, Մարտիրոսեանը խորհուրդ տուեց վերլուծել, ապա աւելացրեց. «Ովքե՞ր էին, որ Ռոբերդ Քոչարեանի ժամանակ ծաղկեցին»:

«Սխալ է որեւէ կապ տեսնել այդ զարգացումների միջեւ: Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ գոյութիւն ունեն ռազմավարական յարաբերութիւններ եւ ոչ թէ տրանսֆորմացուող յարաբերութիւններ»,- նոյն հարցին ի պատասխան յայտարարեց ԱԺ «ՀՀԿ» խմբակցութեան պատգամաւոր Արտակ Զաքարեանը:

«Ռոբերդ Քոչարեանն անպայման կը վերադառնայ, որովհետեւ մենք արդէն փորձ ունենք: Եթէ Լեւոն Տէր-Պետրոսեանը վերադարձաւ, ինչու Ռոբերդ Քոչարեանը չպէտք է վերադառնայ: Բացի այդ, նախագահների միջեւ մրցակցութիւն կայ, եւ այդ առումով ես չեմ բացառում, որ Ռոբերդ Քոչարեանը կը վերադառնայ»,- յայտարարեց Ժողովրդական կուսակցութեան նախագահ Տիգրան Կարապետեանը:

ԱԺ «ՕԵԿ» խմբակցութեան անդամ Յովհաննէս Մարգարեանը դժուարացաւ խօսել հայաստանեան ներքաղաքական կեանքի վրայ ռուսաստանեան քաղաքական զարգացումների ազդեցութիւնների մասին: Նա միայն յիշեցրեց՝ ՕԵԿ-ն արդէն յայտարարել է, որ ոչ միայն չի մասնակցելու գալիք նախագահական ընտրութիւններին, այլեւ սատարելու է գործող նախագահին:

# ՀՀԿ-Ն «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՆԱՐՔ» Է ՈՐԱԿՈՒՄ ՀԱԿ-Ի ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հայաստանի իշխող Հանրապետական կուսակցութիւնը «քաղաքական հնարք» է որակում մինչեւ տարեվերջ արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ անցկացնելու ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի պահանջը:

Հանրապետական կուսակցութեան խօսնակ, Հանրապետական խորհրդարանական խմբակցութեան քարտուղարը Էդուարդ Շարմազանովը «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին ի պատասխան Երկուշաբթի, Սեպտեմբեր 26-ին յայտարարեց, որ ընդդիմադիր այդ ուժը առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ ընտրազանգուածին գրաւելու խնդիր է փորձում լուծել:

«Չորս տարի է այդ պահանջն է: Մի քանի ամսից մեզ մօտ կը սկսուի նախընտրական պայքար, եւ թէ՛ ՀԱԿ-ը թէ՛ միւս քաղաքական ուժերը խնդիր ունեն աւելի ռադիկալ կոչերով հանդէս գալու, որպէսզի ընտրութիւններին ընդառաջ շահեն էլեկտորատի ձայները», - ասաց Շարմազանովը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօ՞ք իշխանութիւնները կ՚առաջարկեն որեւէ փոխզիջում, Շարմազանովը պատասխանեց, որ եթէ ՀԱԿ-ը փոխզիջման պատրաստ լինէր, չէր դադարեցնի երկխօսութիւնը:

«Երկխօսութեան վիժեցումը ամբողջովին ՀԱԿ-ի խղճի վրայ է, որովհետեւ երկու քաղաքական ուժերը կլոր սեղանի շուրջ արդէն առիթ ունեցել են իրենց կարծիքները փոխանակելու, եւ իշխանութեան խումբը լսեց ՀԱԿ-ի մեր գործընկերների հիմնաւորումները: Երբ որ հերթը հասաւ մեր հիմնաւորումներին, կէսը լսեցին, միւս կէսը չլսեցին: Իսկ եթէ դու պատրաստ չես լսելու, դու նաեւ պատրաստ չես ճիշդ գործելու: Եթէ իրենք լրջօրէն մօտենային, ապա բանակցութիւնները կիսատ չէին թողնի եւ կը լսէին իշխանութիւնների հիմնաւորումները, թէ ինչու մեր երկրում չկայ արտահերթ ընտրութիւնների անցկացման իրաւական եւ քաղաքական հիմք: Կոմպրոմիսներն ու ուլտիմատումները տարբեր բաներ են», - ասաց ՀՀԿ մամլոյ խօսնակը:

Ինչ վերաբերում է ՀԱԿ-ի՝ զանգուածային ցոյցերի միջոցով իշխանութիւնների վրայ ճնշումներ ուժեղացնելու յայտարարութիւններին, ապա Շարմազանովը ասաց. - «Թող բոլորը իրենց մտքից հանեն, որ Հայաստանի Հանրապետութիւնում կարող են լինել բախումներ: Ոեւէ մէկը մեր երկրում չի կարող հասարակութեանը տանել քաղաքական բախումների»:

# ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. «ՉՅԱՐԳՈՒԱԾ ՄԱՐԴԻԿ ԸՆՏՐՈՒՈՒՄ ԵՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ»



Ժողովրդական կուսակցութեան նախագահ Տիգրան Կարապետեան

Հայաստանում տեղի ունեցած եւ գալիք ընտրութիւնները ֆարս են, ուղղակի ձեւականութիւն: Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցած, «Նախընտրական պայքարի միտումները Հայաստանում եւ համագործակցութեան հնարաւորութիւնները քաղաքական ուժերի միջեւ» քննարկման ժամանակ այս մասին յայտարարեց Ժողովրդական կուսակցութեան նախագահ Տիգրան Կարապետեանը:

Նրա խօսքով, դրանով է պայմանաւորուած նոյն քննարկմանը ներկայ Հանրապետական կուսակցութեան պատգամաւոր Արտակ Զաքարեանի հանգստութիւնը: «Ասում է՝ մենք պրոբլեմ չունենք, մենք չենք պատրաստւում: Ի՞նչ պատրաստուել. ամէն ինչ գրուած է: Կոալիցիայի անդամները շատ են խօսում ժողովրդավարութեան մասին: Ժողովրդավարութիւն չկայ: Զսիրուած կուսակցութիւններն անցնում են խորհրդարան, չյարգուած մարդիկ ընտրւում են պատգամաւորներ: Մարդիկ գիտեն՝ ում մասին եմ խօսում: Ժողովուրդը մեռուել է, պասիվ է, նոյն կերպ պասիվ էին Արեւմտեան Հայաստանում, երբ մեռնում էին թուրքերի հետ, մտածում էին կ՚անցնի, բայց կորցրեցին հայրենիքը: Մենք այսօր էլ ենք կորցնում հայրենիքը: Ես էլ եմ կողմ արտահերթ ընտրութիւններին, թէկուզ մէկ ամիս շուտ: Պէտք է վերջ տալ այս համակարգին, որովհետեւ բոլորը ձեւ են տալիս, որ ժողովրդավարութեամբ են զբաղւում: Նայէք պատմութեանը. ամէն ինչ կրկնւում է. առաջներում ավտորիտար պետութիւններում գլադիատորներ կային, ուրախացնում էին ժողովրդին, հիմա էլ Վիկ Դարչինեան կայ, գլադիատոր է, ուրախացնում է ժողովրդին: Ուրախացնում են ժողովրդին, համերգներ են տալիս, իսկ մենք մեռւում ենք: Ամէն ընտրութեան, չգիտեմ՝ ինչու, անցնում են նոյն դէմքերը»,- նկատեց Կարապետեանը՝ յաւելով, որ նրանք խորհրդարանում են յայտնւում «դաբրոյով»:

«Բոլորս գիտենք դա, բայց բոլորս հաւաքւում ենք ու տրամաբանում ենք՝ իբրեւ ամէն ինչ լաւ է: Իրականում լաւ չէ, լաւ չի եղել ոչ մի նախագահի օրօք եւ այսօր լաւ չի: Ինչքան էլ ձեւ տաք, որ ամէն ինչ լաւ է ասելով չի, աշխատելով է»,- նշեց Տիգրան Կարապետեանը:

Ամփոփելով՝ նա յայտարարեց, որ ինքը շատ կը զարմանայ՝ եթէ օրերից մի օր ՀՀԿ-ն ընտրութիւնների ժամանակ 10-20 տոկոս ձայն հաւաքի:

Նշենք, որ խորհրդարանական ընտրութիւնները Հայաստանում նախանշուած են 2012 թուականի Մայիսին:

## ԼՈՒՐԵՐ

# ՍԷՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆ.- «ԳՐԱԳԷՏ ԵՒ ԿԻՐԹ ՍՊԱՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԷՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՒՈՐ ԿԸ ԼԻՆԷՐ ԽՈՒՍԱՓԵԼ ԲԱՆԱԿՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԷՊՔԵՐԻՑ»



ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան ղեկավարութեան նիստի ընթացքին ելոյթ կ'ունենայ նախարար Սէյրան Օհանեան (կեդրոնը)

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնում, Սեպտեմբերի 24-ին, տեղի է ունեցել նախարարին կից կոլեգիայի նիստ, որի ընթացքում քննարկուել են ՊՆ-ի ելրտասահմանեան երկրների ռազմաուսումնական հաստատութիւններում ուսումնական գործընթացն ու առկայ խնդիրները:

ՊՆ մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնում են, որ զեկոյցներով հանդէս են եկել պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ Դաւիթ Տոնոեանը, զինուած ուժերի գլխաւոր շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ-լէյտենանտ Էնրիկօ Ապրիամովը, ՊՆ կադրերի եւ ռազմական կրթութեան վարչութեան պետ Մհեր Շիրինեանը, ռազմաուսումնական հաստատութիւնների ղեկավարներ, բարձրաստիճան զինուորականներ:

Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանն իր ելոյթում նշել է, որ ռազմակրթութեան ոլորտում բարեփոխումները զինուած ուժերի առաջնահերթութիւններից են: Պաշտպանութեան նախարարը մասնաւորապէս ասել է. «Ամենամեծ փորձանքները ծնւում են անգիտութիւնից, իսկ ողբերգութիւնները՝ տգիտութիւնից: Ուսեալ եւ մեթոդապէս գրագէտ սպան բռնութիւն չի կիրառում, եւ նրա ենթակայ ստորաբաժանումում միջանձնային փոխյարաբերութիւնների խախտումների հաւանականութիւնը շատ փոքր է: Ցուրի բարքերը, բռնութեան երեւոյթը պէտք է ընկալենք որպէս բանակին ուղղուած մարտահրաւէր, որը պէտք է ընդունել եւ յաղթահարել: Բանակը պէտք է յաղթի ոչ միայն սահմանում. այն իր ներքին առօրեայում նոյնպէս ձախողումներ չպէտք է ունենայ: Վերջին արտակարգ դէպքերը թոյլ են տալիս եզրակացնել, որ գրագէտ եւ կիրթ սպաներ ունենալու դէպքում հնարաւոր կը լինէր խուսափել շատ արատաւոր երեւոյթներից: Ներկայումս ՀՀ ռազմական կրթութեան բնագաւառում կատարուող բարեփոխումները նպատակաուղղուած են ժամանակակից բանակների զինծառայողներին բնորոշ որակական յատկանիշներով օժտուած սպայական կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը եւ որակաւորման բարձրացմանը»:

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԳԵՐՈՒՆ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՐ Է ՓՈԽԱՆՑԵԼ

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակի եւ Հայաստանում Միգրացիայի միջազգային կազմակերպութեան ներկայացուցիչների միջոցով երրորդ երկիր է փոխանցուել ադրբեջանցի ռազմագերի Ռոման Հուսէյնով Նովրուզօղլին: Այդ մասին յայտնում է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութիւնը՝ նշելով, որ Հուսէյնովը հրաժարուել է վերադառնալ Ադրբեջան եւ նախընտրել է ապաստան գտնել երրորդ երկրում:

# ԾԵՐԱԿՈՅՏԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

առաքելութեան ղեկավարի պաշտօնը: Նախապէս ան Ինտոնեզիոյ մէջ աշխատած է ԱՄՆ դեսպանատան մէջ եւ զբաղեցուցած է ղեկավար պաշտօններ: Հէֆըրն աշխատած է նաեւ Ճաբոնի, Մալէյզիայի, Փղոսկրի Ափի եւ Չինաստանի մէջ, իսկ 1994-1996 ԱՄՆ Գոնկրէսի Ներկայացուցիչներու Տան արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի Ասիայի հարցերով ենթայանձնաժողովին մէջ:

Երեւանի մէջ գործող Տարածաշրջանային Ուսումնասիրութիւններու կեդրոնի ղեկավար, քաղաքագէտ Ռիչըրտ Կիրակոսեան, դեսպանի հաստատման կապակցութեամբ «Ազատութիւն» ռատիոկայանի ըսած է, որ Միացեալ Նահանգները Հէֆըրնին հաստատումով ցոյց տուաւ, որ Հայաստան առանց դեսպանի ձգել կարելի չէ. - «Իմ կարծիքով, այս ամէնի մէջ լաւն այն է, որ Միացեալ Նահանգները որոշել է չթողնել Հայաստանը առանց դեսպանի երկար ժամանակահատուածով, ինչպէս դա արդէն մէկ անգամ պատահել է: Նրանք ցանկացան շատ նշանակում անել», աւելցուցած է Կիրակոսեան:

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՄԱԿ-Ի ԱՄԲԻՈՆԻՑ ՇԵՇՏՈՒՄ Է ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

«Երեք տարի առաջ, պատիւ ունենալով խօսելու այս ամբիոնից, ես նշել էի, որ ժամանակն է եկել լուրջ անդրադարձ կատարելու ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի իրականացմանը 21-րդ հարիւրամեակի պայմաններում: Այսօր մենք ականատես ենք այս անքակտելի իրաւունքի իրացման նոր օրինակների», - ասել է Սերժ Սարգսեանը՝ շնորհաւորելով ՄԱԿ-ի նորընտիր՝ 193-րդ անդամին՝ Հարաւային Սուդանի Հանրապետութեանը, որի ճանապարհը «մինչեւ այս դահլիճում տեղ ունենալը երկար էր ու դժուարին». - «Միեւնոյն ընտրութիւնը երկու տասնամեակ առաջ կատարել է նաեւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը՝ իրականացնելով ինքնորոշման իր իրաւունքը, դիմակայելով Ադրբեջանի կողմից սանձազերծուած պատերազմին եւ արեան գնով նուաճելով իր ազատ ապրելու իրաւունքը»:

Գործադրուած ու գործադրուող միջնորդական ջանքերի համար շնորհակալութիւն յայտնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներին ու այդ երկրների ղեկավարներին՝ Հայաստանի Նախագահը շեշտեց, որ «միջնորդները չեն կարող բանակցող կողմերի փոխարէն համաձայնութիւն կայացնել»:

«Փոխհամաձայնութեան հասնելու Ադրբեջանի ցանկութեան բացակայութիւնը, նրա որդեգրած «ամէն ինչ կամ պատերազմ» կեցուածքը թոյլ չեն տալիս առաջընթաց արձանագրել բանակցութիւններում», - ասել է Սերժ Սարգսեանը:

Այնուհետեւ Սերժ Սարգսեանը անդրադարձել է Հայոց ցեղասպանութեանը. - «Օսմանեան կայսրութիւնում հայերի հանդէպ իրագործած ցեղասպանութիւնը ճանաչուել եւ դատապարտուել է բազմաթիւ երկրների, խորհրդարանների, միջազգային կառոյցների, ցեղասպանագէտների հանրութեան կողմից: Ինչը, ցաւոք, չենք կարող ասել Թուրքիայի Հանրապետութեան մասին, որը շարունակում է վարել մարդկութեան հանդէպ իրականացրած այս ոճրագործութեան ժխտման քաղաքականութիւն: Առանց ճանաչման եւ դատապարտման հնարաւոր չէ կանխարգելման արդիւնաւէտ մեխանիզմների մշակումն ու կիրառումը, ինչը ՄԱԿ-ի առաջնահերթութիւններից է: Հայաստանը շարունակելու է գործադրել իր ողջ կարողութիւնները ցեղասպանութիւնների ճանաչման, դատապարտման եւ կանխարգելման նպատակով»:

Սերժ Սարգսեանն անդրադարձել է նաեւ հայ-թուրքական յարաբերութիւններին՝ նշելով, որ 2009 թուականին ստորագրուած արձանագրութիւնների վաւերացումն ու իրականացումն «ամէն կերպ վիժեցւում են Թուրքիայի կողմից».

# ԷՐԴՈՂԱՆ. «ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է, ՈՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՄՆԱՑ ՉԼՈՒԾՈՒԱԾ»

Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Էրդողանը ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանում օրը ունեցած ելոյթում ասել է, որ «Ադրբեջանի տարածքների անարդար օկուպացիան» պէտք է աւարտուի:

«Անընդունելի է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը մնայ չլուծուած, մեր քաղաքական եւ բարոյական պարտքն է՝ լուծել ազգամիջեան հակամարտութիւնները նախքան դրանք կը վերաճեն չարորակ ուռուցքի»,- ասել է Էրդողանը:

Մինչդեռ, ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայում նրա ելոյթի հիմնական թիրախն Իսրայէլն էր:

Էրդողանի փոխանցմամբ, Իսրայէլն է տարածաշրջանում անկայունութեան աղբիւրը:

Թուրքիան առ այսօր սպասում է, որ Իսրայէլը ներողութիւն հայցի Գազա մարդասիրական բեռ փոխադրող «Խաղաղութեան Նաւատորմի» վրայ մարդկային զոհերի հանգեցրած յարձակման համար:

# ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՐԹԸ ԲԱՑԱՅԱՅՏԱԾ Է

Շարունակուած էջ 1-էն

առանձնայատկութիւնն այն էր, որ Հայաստանի Ցամաքային զօրքերու հարուածող ուժը, Տ-72 Բ տանկերը եւ ԲՄՊ-2 ռազմական մեքենաները հրապարակ բերուեցան տեղափոխող սարքերու վրայ՝ ասֆալտը չվնասելու համար: Հակառակ որ, հայկական իշխանութիւնները կը պնդեն, թէ զօրահանդէսը նախատեսուած էր կազմակերպել մի քանի տարի առաջ, սակայն շատերը համոզուած են որ, ան պատասխան էր Պաքուի Յունիսի 26-ի զօրահանդէսին՝ նուիրուած Ատրպէյճանի զինուած ուժերու օրուան»,-կը գրէ «Օրուժիյէ Ռոսիի» թերթը:

# ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՄԼՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Շարունակուած էջ 1-էն

րադառնալ վերարտադրման եւ կենսէթիկ հաւասարակշռութեան վրայ: Այս բոլոր գործօնները կը վկայեն, որ հասարակութիւնը կը ծերանայ: Նոյն ֆոնի վիճակագրութեամբ, Հայաստանի քաղաքացիներու 44 տոկոսը իր համար ապագայ չի տեսներ Հայաստանի մէջ:

Ֆրանսական մամլոյ գործակալութիւնը կը տեղեկացնէ որ, ֆոնտի ներկայացուցիչ Գագիկ Հայրապետեան համաձայն, վերջին շրջանին Հայաստանը կը լքեն ոչ միայն անոնք, որոնք աշխատանք չունին, այլ նաեւ անոնք, որոնք լաւ մասնագէտներ են եւ բարձր վարձատրուող աշխատանք ունին:

«Որոշ երեխաներ կապ կը պահպանեն իրենց հայրերուն հետ՝ Ինթերնեթի միջոցով, ուրիշներ կը սպասեն, որ իրենց հայրերը տուն վերադառնան Ռուսաստանէն՝ թէկուզ Ամանորին»,- կ'եզրակացնէ յօդուածի հեղինակը:

# ԼՈՒՐԵՐ

## ՀԵՐՈՍԻ ԴԻՄԱՒՈՐՈՒՄ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՀՄՈՒՏ ԱՊՊԱՍԻ



Պաղեստինի պետութեան նախագահ Մահմուտ Ապպաս՝ ՄԱԿ-ի ժողովէն տուն դարձին, հերոսի վայել դիմաւորում ունեցաւ Ռամալլայի մէջ: Արդարեւ, պաղեստինցի ղեկավարը Նիւ Եորքի մէջ, ՄԱԿ-ի ժողովին ելոյթ ունենալով իր երկրի համար անդամակցութեան դիմում կատարած էր:

Միւս կողմէ ԱՄՆ, ՄԱԿ, Ռուսաստան եւ Եւրոպական Միութիւն քառեակը, միասնաբար յայտարարութիւն մը կատարելով հարկադրեցին պաղեստինցիներն ու իսրայէլցիները որ առանց նախապայմանի, մէկ ամսուան ժամանակամիջոցի մը ընթացքին, վերադառնան ուղղակի բանակցութեանց:

Մահմուտ Ապպաս զինք դիմաւորող իր հարազատ հայրենակիցներուն առջեւ ելոյթ ունենալով լաւատեսութիւն յայտնեց «Պաղեստինեան Գարուն» ծրագրի յաջողութեան համար:

## ԼԻՊԻԱՑԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ ՄՕՏԵՑԱՆ ՍԸՐԹ ՔԱՂԱՔԻՆ



Լիպիացի յեղափոխականները բազմաթիւ քաղաքներ գրաւելէ ետք, այժմ պաշարման տակ առած են Մուամմար Կազզաֆիի Թաքսոոցն ու ծննդավայրը նկատուող Սըրթ քաղաքը: Յարձակումներու թիրախ դարձած է նաեւ Պանի Ուալիտ քաղաքը:

Հազարաւոր քաղաքացիներ փախուստ կու տան Սըրթէն: Փոխանցման Խորհուրդի եւ ՆԱԹՕ-ի միաւորները օդային եւ ցամաքային ռմբակոծումի կ'ենթարկեն Կազզաֆիի վերջին զօրանոցներէն մէկը նկատուող Սըրթ քաղաքը: Ռազմական գետնի վրայ, ապստամբները կը հանդիպին Քազաֆիի հաւատարիմ զօրքերուն դիմադրութեան: Ապստամբները, որոնք նախնական շրջանին մուտք գործած էին Սըրթ, տեղի տալով Կազզաֆիի զօրքերուն հակայարձակումներուն, հեռացան նախապէս գրաւած իրենց դիրքերէն: Անոնք ներկայիս կ'սպասեն ՆԱԹՕ-ի օդարշաւներուն:

Սըրթը եւ Պանի Ուալիտ կը շարունակեն դիմադրել Փոխանցման Խորհուրդի արշաւներուն: Պանի Ուալիտ բնակիչները կը դիմագրաւեն սննդանիւթի, ջուրի, բժշկական օժանդակութեան, ելեկտրականութեան եւ վառելանիւթի ներքին տագնապներ: Քաղաքներէն փախուստ տուողները կը վկայեն, թէ հարիւրաւորներ կը դառնան կոյր ռմբակոծումներու զոհ: Անոնք նաեւ կ'աւելցնեն, թէ Կազզաֆիի կողմնակիցները պատրաստ չեն դառնալու անձնատուր:

## ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԸ ԻՐԱՒՈՒՆՔ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՔՈՒԷԱՐԿԵԼՈՒ

Սէուտական Արաբիոյ վեհապետ Ապտալլա թագաւորը առաջին անգամ ըլլալով ժամանակակից պատմութեան մէջ, արտօնեց որ կիներն ալ քուէարկելու իրաւունք ունենան, երկրի յառաջիկայ քաղաքապետական եւ այլ ընտրութեանց ընթացքին: «Շարիա»ի օրէնքին համաձայն անոնք իրաւունք պիտի ունենան նաեւ իրենց թեկնածութիւնը առաջարկելու: Նշենք նաեւ որ թագաւորը 2009 թուականին Նորա Պինթ Ապտալլահ Ալ Ֆայէզը նշանակած էր առաջին կին փոխ նախարարուհին:

Իգական սեռին շնորհուելիք յառաջիկայ արտօնութիւններէն մէկն ալ կրնայ ինքնաշարժ վարելու իրաւունքը ըլլալ:

Աւելցնենք նաեւ որ քուէարկելու նոր օրէնքը ի զօրու պիտի դառնայ 2015 թուականէն սկսեալ...:

## ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Գահիրէէն ստացուած տեղեկութեանց համաձայն՝ Եգիպտոսի մարդկային իրաւունքներու պաշտպանութեան խմբակցութիւնը իր դժգոհութիւնը յայտնած է խօսքի ազատութեան նկատմամբ եղած կաշկանդումներուն դէմ, որ յատկապէս ակնյայտ դարձած է տարեսկիզբին նախագահի Հիւսնի Մուպարաքի պաշտօնանկութենէն ասդին: Արդարեւ, զինեալ ուժերու կողմէ պետութեան ղեկավարութիւնն ստանձնած Զինուորական Խորհուրդը՝ ստիպողական դրութեան օրէնքներ հաստատած է եւ կ'ուզէ զայն երկարաձգել: Այս երեւոյթին իբրեւ հետեւանք արգիլուած է «Սաութ էլ Ումմա» օրաթերթի կիրակնօրեայ համարի լոյս ընծայումը, որուն մէջ լոյս պիտի տեսնէր յօդուած մը Օմար Սուլէյմանի մասին:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԸՍԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

ցած են Հայաստանի եւ Քալիֆորնիոյ գործարար համայնքի ներկայացուցիչներ: Համաժողովի մասնակիցներուն ուղղուած իր խօսքին մէջ նախագահը կարեւոր համարած է Սփիւռքի ներուժի լիարժէք օգտագործումը՝ ի նպաստ Հայաստանի տնտեսութեան զարգացման եւ Հայաստանի Հանրապետութեան հզօրացման: Սերժ Սարգսեան նշած է, որ անցեալ քսան տարիներու ընթացքին տնտեսութեան զարգացման գործին մէջ լիարժէք չէ օգտագործնաեւ Հայաստանի քաղաքացիներու ներուժը: Նախագահի խօսքով, Հայաստանի անկախացումէն ի վեր եղած են ե՛ւ ձեռքբերումներ, ե՛ւ բացթողումներ: Խօսիլ միայն բացթողումներու մասին, ըստ անոր, կը նշանակէ պատասխանատուութիւնը սեփական ուսերէն նետել ուրիշի ուսերուն: «Մենք տէրն ենք ե՛ւ բացթողումների, ե՛ւ ձեռքբերումների»,- ըսած է Սարգսեան: Անոր խօսքով, անշուշտ, այդ ներուժը ամբողջութեամբ օգտագործելու պարագային կրնայինք ունենալ աւելի շատ ձեռքբերումներ:

Սերժ Սարգսեան շնորհակալութիւն յայտնած է սփիւռքահայ գործարարներուն՝ անցեալ քսան տարիներու ընթացքին հայրենիքի հզօրացման ուղղուած իրենց գործունէութեան համար: «Յոյս ունեմ, որ ընդհանուր ջանքերով մենք տեսանելի ապագայում ունենալու ենք մի երկիր, որով բոլորս միասին հպարտանալու ենք»,- ըսած է նախագահը:

Լոս Անճելեսի մէջ Սրբոց Ղեւոնդեանց նորակառոյց առաջնորդանիստ եկեղեցիին մէջ Սերժ Սարգսեան ներկայ գտնուած է պատարագին, որ համատեղ մատուցած են Հայ Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան Ամերիկայի թեմի առաջնորդ Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանն ու Կիլիկիոյ կաթողիկոսութեան նոյն թեմի առաջնորդ Մուշեղ արքեպիսկոպոս Մարտիրոսեան: Եկեղեցիին յարակից առաջնորդարանի կեդրոնին մ էջ այնուհետեւ տեղի ունեցած է ընդունելութիւն, ուր Սերժ Սարգսեան հանդիպում ունեցած է նաեւ թեմական խորհուրդի ներկայացուցիչներու եւ ԱՄՆ-ի արեւմտեան ափին բնակող հայ բարերարներու հետ: Նոյն օրը Սերժ Սարգսեան մասնակցած է «Ամերիա» խումբի ներկայացուչութեան բացման արարողութեան:

Լոս Անճելեսի մէջ Սերժ Սարգսեան նաեւ ներկայ գտնուած է Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան նոր շէնքի բացման արարողութեան: Սերժ Սարգսեան վստահութիւն յայտնած է, որ մեր բոլոր հայրենակիցները, որոնք կ'ապրին Միացեալ Նահանգներու այդ ափին մէջ, անպայման հնարաւորութիւն պիտի գտնեն գոնէ մէկ անգամ այցելելու մեր հիւպատոսարան: «Ես կոչ եմ անում բոլորին, ովքեր ապրում են Միացեալ Նահանգների այս մասում, իրօք, գալ այստեղ: Կոչ եմ անում ե՛ւ նրանց, ովքեր իշխանութիւններին սիրում են, ե՛ւ նրանց, ովքեր իշխանութիւններին չեն սիրում, որովհետեւ շատ բան ժամանակաւոր է. դժուարութիւնները ժամանակաւոր են, նոյնիսկ պատերազմն է ժամանակաւոր, սիրելի կամ ոչ սիրելի իշխանութիւնները ժամանակաւոր են, յաւէրժականը հայրենիքն է, իսկ հայրենիքի հետ կապող օղակը հէնց այս շէնքն է:

Օգտուելով առիթից՝ ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել ԱՄՆ-ին, որ մեր ժողովրդի համար ամենածանր պահերին հնարաւորութիւն տուեց մեր հայրենակիցներին մուտք գործելու Միացեալ Նահանգներ, հնարաւորութիւն տուեց արժանապատիւ ապրելու, զարգանալու, ընդելուզուելու այս հզօր երկրի հասարակութեան մէջ՝ ճանաչելի դարձնելով իր պատմական հայրենիքը: Մենք հպարտանում ենք ձեզնով եւ ամէն ինչ անելու ենք, որ դուք էլ մեզնով հպարտանաք»,- ըսած է Սերժ Սարգսեան՝ շնորհակալութիւն յայտնելով նաեւ տեղի իշխանութիւններուն:

Սեպտեմբեր 25-ի երեկոյեան Սերժ Սարգսեան Լոս Անճելեսի մէջ մասնակցած է ՀՀ անկախութեան 20-ամեակին նուիրուած տօնական ընդունելութեան, իսկ մինչ այդ, ան հանդիպում ունեցած է աշխարհահռչակ օփերայի երգիչ Փլասիտօ Տոմինկոյի հետ:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԿԸ ՆԵՐԷՔ… Ի ՅԱՐԿԷ… ԲԱՅՑ…
## Բաց Նամակ Մեր Նախագահին

***ԼԻԼԻԹ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ***

*Զգիտեմ, ի հարկէ, այս տարբերակով Ձեզ դիմելն ի՞նչ իմաստ ունի, այսինքն՝ Ձեզ կը հասնի՞… բայց այլ տարբերակ ուղղակի չեմ տեսնում:*

*«Կան կեղծ հերոսներ, կեղծ իտէալներ, որոնք կարող են գայթակղիչ լինել անփորձ երիտասարդների համար», սա մէջբերում է Ձեր իսկ խօսքից:*

*Յարգելի պարոն Նախագահ, դուք Հ1 նայո՞ւմ էք, Դուք տեղեա՞կ էք, ինչ է կատարւում մեր հանրապետութիւնում:*

*Նախ այստեղ սարսափելի հայերէն է, բացարձակ անտէր մեր մայրենին կը ներէք, բայց միայն անտէր բանի հետ են այդպէս վարւում: Այստեղ փողոցի «գողական» ժարգոնն է եթերում՝ ազատ, անկաշկանդ, տնավարի, առանց բարդոյթների… մի բան, որ փաստօրէն խրախուսւում է, քանի որ նաեւ գովազդի լեզուն է(օրինակ, «արա, ապէ, լաւ էլ չուստրի ես, դրա համար էս մարզպետախնձով…»): Օրինակներ կարելի է բերել անվերջ:*

*Այստեղ բազմաթիւ սերիալներ են, որտեղ ամուսնանում են, երեխաներ են ունենում (երբեմն չիմանալով ումից), դաւաճանում են, բաժանւում են… մի խօսքով՝ այն ինչ կատարւում է ամէնուր: Բայց մեր տեղական սերեալներում անպակաս է կրիմինալը, ընդ որում՝ ամենատարբեր դրսեւորումներով, բոլոր թոյլատրելի սահմաններից դուրս, որովհետեւ ոչ միայն առեւանգում են, ծեծում են, սպանում են, վրէժ են լուծում, այլեւ արդէն հասել են այն մակարդակի, որ երեխայ են գողանում… Ընդ որում, ոստիկանութիւն չկայ, նախընտրելի անձնական հաշուեյարդարը:*

*Դա Ձեզ չի՞ անհանգստացնում:*

*Ի հարկէ նոյն պատկերն է նաեւ միւս հեռուստաընկերութիւններում. նոյն ողբացող կանայք եւ կրիմինալի հետքերով տղամարդիկ, գումարած զանազան ու զարմանազան հաղորդավարներ, որոնք երբեմն ուղղակի սարսափելի են ( օրինակ, նրանցից մէկը հիւրին հարցնում է. «Դուք ձեր եղունգները կրծո՞ւմ էք), իսկ միւսը հրաժեշտ է տալիս ասելով՝ «Դէ ի՞նչ, ես էլ գնամ օրգազմի իմ բաժինը ստանալու»… եւ այսպէս շարունակ):*

*Շարունակել իմաստ չունի, դա անսպառ նիւթ է…*

*Մի պահ պատկերացնենք, որ մեր երկիրն ու մշակոյթին անծանօթ մէկը հետեւում է մեր կապոյտ էկրանին՝ մեր ժողովրդի մասին պատկերացում կազմելու համար: Եւ ի՞նչ կը տեսնի, անվերջ լացող կանայք, ծպտուած անտաշ դէմքեր, դուէհիկ խօսուածք, դաժան պատմութիւններ, ծռուած բերաններ… ինչ մշակոյթ, ինչ բան: Մենք չգիտենք ինչէ դաշնամուրը կամ ջութակը, երգեհոն չենք տեսել, ինչ է գրականութիւն, նկարչութիւն, ճարտարապետութիւն կամ նման բաներ… իսկ մեր լոյսն ու պայծառ անընդհատ երեւացող նոյն դէմքերէն են՝ մեր կիսատ-պռատ երգիչները…*

*Ի՞նչ նպատակ ենք հետապնդում. ապուշացնելու, դաժանացնելու, իրական արժէքները փոշիացնելու, ի՞նչ: Կ'ասեն՝ մի նայիր: Ես չեմ նայում, բայց ես ապրում եմ այն հասարակութեան մէջ, որին հետեւողական դաժանացնում են… Իսկ ես ապրում են այստեղ, որովհետեւ սա իմ երկիրն է:*

*Ձեզ կ'ասեն, «ռեյտինգ», կ'ասեն՝ ժողովուրդը դա է ուզում: Սուտ է, չհաւատաք, այդ օտար կեղծ ներմուծումն իրականութեան հետ կապ չունի: Այսպէս ասողներն ու մտածողներն ի՞նչ բարոյական իրաւունքով են մեր ժողովրդին պատկերացնում այդքան գաւառամիտ, այդքան տգէտ ու այդքան անճաշակ: Այն ժողովրդին, որ մեր հզօր մշակոյթի ստեղծողն ու կրողն է:*

*Կ'ասեն՝ դժգոհ է հինգ տոկոսը: Այսինքն՝ միայն հի՞նգ տոկոսը գիտի, որ մեր անքանակ «աստղերը» վատ են երգում ու իսկի լուսատտիկ էլ չեն, միայն հի՞նգ տոկոսը գիտի, որ հեռուստատեսութեամբ խօսւում է խայտառակ հայերէնով, եւ որ մենք ազգային արժէքներ ունենք, միայն հի՞նգ տոկոսն է ընդվզում ու չի ուզում, որ երեխայ գողանալն էլ մտնի կենցաղ:*

*Լաւ, թող լինի հինգ տոկոսը… այդ դէքպում ո՞ւր մնաց 70-ականների Ձեր եւ մեր սերունդը… իսկ մեր ջահելների հետ մենք ի՞նչ արեցինք… իսկ ո՞ր տոկոսի մէջ է երկրի քաղաքականութիւն թելադրողը…*

*Յարգելի պարոն Նախագահ, արդեօ՞ք դատարկ խօսակցութիւն է, որ ազգային հեռուստատեսութիւնը (եւ հեռուստատեսութիւնն ընդհանրապէս) նոր կառուցուող երկրի յենակէտերից մէկը պէտք է լինի, պետութեան իւրովի դէմքը, ներքին քաղաքականութեան լծակներից մէկը, երիտասարդութեանը ուղղորդող ինքնատիպ գործօն, նաեւ մշակութային երեւոյթ, նաեւ ազգային մշակոյթի տարածողը, երկրի խօսքն ու կարծիքը, երկրի մտաւորականն ու պաշտօնեան:*

*Յարգելի պարոն Նախագահ, թախանձագին խնդրում եմ (եւ համոզուած եմ ինձ հետ նաեւ շատ շատերը) զինուէք համբերութեամբ ու հեռուստացոյց նայէք…*

*Իսկ յետոյ ինչ որ ձեւով արձագանգէք, որ ես ու ինձ նմանները, որոնք շատ շատ են, վերջապէս իմանան՝ ի՞նչ է դա՝ ինչ որ յատուկ քաղաքականութի՞ւն, եւս մի փորձութի՞ւն, որին պէտք է դիմանալ, թէ՞ պարզապէս ժամանակաւոր թիւրիմացութիւն:*


**Ձեր Ծանուցումները**
**Վստահեցէք**
**«Մասիս»**
**Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**



«ԱԿԱՆՋԴ ԲԵՐ ԱՍԵՄ»
ՑՈՒՇ-ԵՐԵԿՈՅ

նուիրուած

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ
ՄԱՀՈՒԱՆ 40-ԱՄԵԱԿԻՆ

Կազմակերպութեամբ՝
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Գլխաւոր Բանախօս՝ ԱՆԱՀԻՏ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Բանասէր, Գրականագէտ
Անձնական Յուշեր Սեւակէն՝ ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ
Խօսք Ցիշատակի՝ Երջանկայիշատակ ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Ամենայն Հայոց
Ասմունք՝ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ, ՄՀԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ, ԿԻՄԱ ԴԱՒԹԵԱՆ, ՇԱՀՈՒՄ ՂԱԶԱՐԵԱՆ
Երգ՝ ՄԵՍՐՈՊ ԹԱՇՃԵԱՆ
Հանդիսավար՝ ՑԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ



Տեղի կ'ունենայ
ՀԻՆԳՇԱԲԹԻ,
ՀՈԿՏԵՄԲԵՐ 13, 2011
երեկոյեան ժամը 8:00ին
Կլէնտէյլի կեդրոնական գրադարանին մէջ
222 East Harvard St., Glendale

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

# Ո՞ՒՐ ԷՔ ՏՂԱՆԵՐ...
## (Մտահոգութի՞ւն, թէ՝ հոգու ցաւ)

*ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ*

*- Ե՛ւ մտահոգութիւն, ե՛ւ հոգու ցաւ, - ահա այն ապրումն ու զգացումը, որ ես, եւ ինձ նման շատեր, ունեցան այդ օրը Կլենտէյլի Հանրային գրադարանում:*

*Առանց յայտարարութիւնները, առանց աղմուկի, մէկը միւսին լուր տալով, մէկը միւսին հեռաձայնելով, ձեռնարկի կազմակերպիչները «իրար գլխի» էին հաւաքել տաս, քսան եւ աւելի տարիներ մեծն Լոս Անճելոսում հաստատուած երեւանցի երաժիշտներին՝ նշելու համար թաւջութակի մեծագոյն վարպետներից մէկի՝ Գէրոնտի Թալալեանի ծննդեան 85 ամեակը:*

*Նման յուզումնալից երեկոյ դժուար է նկարագրել: Շատեր, տարիներ ամբողջ, չեն տեսել, չեն հանդիպել միմեանց, եւ ահա այսօր, Թալալեանի երախտագէտ ուսանողներն ու բարեկամները որոշել են ոչ միայն յիշել իրենց անմոռաց ուսուցչին ու աւագ ընկերոջը, այլեւ նրա անունը «օգտագործելով քով-քովի բերել հին երաժիշտ ընկերներին:*

*Աննկարագրելի հաճոյք ու բերկրանք ապրեցինք Երեւանցի (ոչ անպայման Երեւանում ծնուած) երաժիշտների, հետ, որոնք ուսանել են Երեւանում, սովորել կոնսերվատորիայի հին շէնքում, Նշանաւոր Պոնչիկանոցի եւ գրի, դպրութեան պահապան Մատենադարանի հարեւանութեամբ եւ յետագայում աշխատել են տարբեր երաժշտական համոյթներում:*

*Որքա՜ն թախիծ ու կարօտ կար իւրաքանչիւր երաժշտի աչքերում: Հին կարօտ, երեւանեան կարօտ: Իրար կորցրած հարազատի պէս, քոյր-քրոջ նման, եղբայր-եղբօր նման, փարւում, փաթաթւում էին արցունքները հի՜ն օրերի մեր նորօրեայ, հիմնականում այսօր էլ, այս օտար ափերում գործող, իրենց մասնագիտութեամբ ազնիւ հաց վաստակող երեւանցի մեր երաժիշտները, որոնցից շատերն այսօր պապ ու տատ են դառել:*

*Գէրոնտի Թալալեանի անունը առիթ էր, միջոց՝ վերյիշելու մեր վաղեմի անցեալը: Յիշելու աննման պրոֆեսորներին, մեր՝ ի՛սկապէս հայրենասէր մանկավարժներին, որոնք, շատ անգամ շրջանցելով խորհրդային կարգերի կողմից սահմանուած որոշ օրէնքներ, յանուն այս կամ այն ապագայ խոստացող ուսանողի առաջընթացի, թոյլ էին տալիս խախտումներ, որոնք, որպէս օրէնք, մնում էին կոնսերվատորիայի պատերից ներս:*

*Եւ ո՜վ ասես, որ չի եկել Թալալեանի ցերեկոյթին: Ահա, խնդրեմ, իմ եւ Մարիետայի հարեւանութեամբ յիշողութիւնների գիրկն են ընկել «Քարաւանի» անզուգական, առ այսօր անմրցելի կատարող, կլարնետահար Յարութիւն Անսուրեանը, դարձեալ տաղանդաւոր կլարնետահար, մեր երիտասարդ տարիների երաժիշտների շրջանում Մկըր անունով յայտնի երաժիշտ Մկրտիչ Թուլակեանը:*

*- Մաեստրօ, - դիմում է ինձ Մկըրը, յիշո՞ւմ ես, ես նուագել եմ քո դիպլոմի ժամանակ:*

*- Ի հարկէ յիշում եմ, - ասում եմ ես ու ջերմօրէն գրկւում երկուսի հետ:*

*Քիչ այն կողմ գրոյցի են բռնուել մեր հին տղերքն ու աղջիկները Յարութն ու Համբոն, Նազոն ու Սուսոն, Տիկոն ու Վահէն, - մենք այդպէս ենք դիմել միմեանց, ազգանուն-մազգանուն, կոչում-մոչում չկա՜յ...*

*Մենք այդպիսի սերնդի տղերք ենք, ու ամէն ինչ տեսել ենք կեանքում, մեզ ոչնչով չես զարմացնի ու վախեցնի:*

*Լաւ օրից չէր, որ բոլորս հանգրուանեցինք աշխարհի բոլոր զուգահեռականներում ու այսօր մեր շնորհքն ու տաղանդը ցրիւ ենք տալիս բոլոր երկրներում՝ Գանատայից մինչեւ Աւստրալիա, Աֆրիկէյից մինչեւ հարաւային Ամերիկա: Էկուատորն էր մնացել՝ այն էլ «նուաճեցինք»...*

*Եւ, որովհետեւ, Գէրոնտի Թալալեանի անունն էր մէկտեղել Լոս Անճելըսի Երեւանցի երաժիշտներին, արժէ ուրեմն գէթ մէկ-երկու պարբերութեամբ վերականգնել շատերի նման մոռացուած տաղանդաւոր երաժշտի մասին ունեցած մեր տեղեկութիւնները:*

*Դասական երաժշտութեան երկրպագուների համար պիտի որ ծանօթ լինի Թալալեան մականունը՝ գէթ Կոմիտասի անուան քառեակի պատմութիւնից: Չէ՞ որ Գէրոնտիի աւագ եղբայրը եղել է համբաւաւոր քառեակի երաժիշտներից մէկը, նշանաւոր ալտահար Հենրիկ Թալալեանը, որը 25 տարի, առանց ընդմիջման ծառայել է հայ երաժշտութեան տարածման գործին:*

*Ես լաւ, շա՜տ լաւ եմ յիշում Գէրոնտի Թալալեանին, դեռ Ռ. Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանում սովորած տարիներից: Պարթեւահասակ, յաղթանդամ, մշտապէս գլուխը սափրած, սիկարէթը բերնին այդ համակրելի տղամարդուն, որ առանձինչուք էր սփռում իր շրջուջը, ի մասնաւորի ուսումնարանի ողջ մանկավարժական կոլեկտիւից ներս:*

*Գէրոնտի Թալալեանը Գիւմրու ծնունդ էր, սովորել է Երեւանի Չայկովսկու անուան երաժշտական դպրոցում, այնուհետեւ Մոսկուայի պետական կոնսերվատորիայում: Քսանհինգ տարի շարունակ, մինչեւ իր կեանքի վերջալոյսը Երեւանում եւ այլուր գործել է նրա հիմնադրած, միակ թաւջուկահարների համոյթը:*

*Թալալեանը բազմաթիւ ճանաչուած երաժիտշների հետ կատարել է յատկապէս իր համար գրուած հայ կոմպոզիտորների բազմաթիւ ստեղծագործութիւններ:*

*Եւ այս՝ իրեն նուիրուած ցերեկոյթին բեմի վրայ են իր ուսանողներն ու իր երկրպագու չորս թաւջուկահարներ: Բացառիկ մի երեւոյթ՝ մեր համայնքի խառնափնթոր, չասելու համար անճաշակ ու անհրապոյր «մշակոյթային» երեւոյթների կողքին:*

*Հրաշալի մտայղացման հեղինակներն են Գէրոնտի Թալալեանի զոյգ սաները, ճանաչուած թաւջութակահար, երբեմնի մրցանակակիր, ճանաչուած Վահէ Հայրիկեանն ու ի մասնաւորի, շնորհալի երաժիշտ, իմ ուսանողական տարիների ընկեր, բարեկամ Սարգիս Աւետիսեանը:*

*Մէկուկէս ժամ թաւջութակի համար գրուած կամ մշակուած տասից աւելի մէկը միւսից գրաւիչ, հաճելի երաժշտական գործեր կատարեցին Թալալեանի նուիրուած միջոցառմանը:*

*Երեկոյի կազմակերպիչները օրուայ յայտագիրը իր լրումի հասցնելու ճանապարհին, դիմել են նաեւ Երեւանի երաժիշտ բարեկամներին, որոնք էլ հայթայթել են նիւթեր՝ Գէրոնտի Թալալեանի համերգային ծրագրերից:*

*Յաւուր պատշաճի ներածական էր պատրաստել երաժշտագէտ Սուսաննա Դանիէլեանը, որն ընթերցեց շնորհալի օպերային երգիչ Ռուբէն Թէլունցը:*

*Թաւշութակահարների քառեակը լրացրին երիտասարդ երաժիշտ Գարիկ Թէրզեանը եւ տաքարիւն, հայ եւ օտար շրջանաթակներին ծանօթ թաւջութակահար Արմէն Քսաջիկեանը:*

*Ի՞նչ ասել դաշնակահար, Նախկինում թաւջութակահար Լեւոն Աբրահամեանի մասին, որին յիսունից աւելի տարիների ընթացքում մշտապէս տեսել եմ երաժշտական աշխարհում խոյանքներ անելիս:*

*Դաշնակահար Խաչիկ Քիւրքչեանին էլ գիտեմ աւելի քան երեսուն տարի, բայց երբեւէ չէի վայելել նրա այդքան նուրբ ու քնքոյշ նուագակցութեան բոյրը:*

*Ապրէ՛ք տղաներ, դուք մի նոր լոյս բերիք մեր համայնքի երաժշտական մռայլ երկնքում:*

*Ստեղծուել է մի անելանելի վիճակ. մարդիկ զրկուած լինելով Հայաստանում տուն-տեղից, յայտնուել են իսկի՝ «առաջը ջուր, յետեւը՝ սուր» կարգավիճակում: Ուզում եմ խորհուրդ տալ մեր իշխանութիւններին, որ ամօթ է պարոնայք, մի՛ ստէք, քանզի դրանից մարդկային ճակատագրեր, կեանքեր են կախուած: Արդիւնքում տուժում են այն ծանր հիւանդները, ովքեր իսկապէս արտասհմանում բուժման կարիք ունեն:*

*«Արի Տուն» հոգեցունց ծրագիրը այսպէս չեն կեանքի կոչում պարոնա՛յք ազգընտիրներ: Ուղղակի աբսուրդի հասնող մի ծրագիր, որը մատնուած է ձախողման զուտ այն պատճառով, քանզի սփիւռքահայը երաշխիքներ չունի, քանզի տեսնում ու լսում է, որ Հայաստանը դատարկւում է, Հայաստանը հայաթափւում է, էլ սփիւռքահային ի՞նչ սին խոստումներով կարող էք խաբել: Չէ՞ որ «Արի Տուն» ծրագիրն էլ ստեր մոգոնելով ու խաբէութեան վրայ պէտք է կեանքի*

Շար.ը էջ 19



### Հայ Մշակոյթի Ամուսան Առիթով
# ՊՐՈՖ. ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ (1876-1953)
## եւ իր «Հայերէն Լեզուի Արմատական Բառարան»ը

*ՀԵՂԻՆԱԿԸ*



Հայ ժողովուրդի 20-րդ դարու ամենէն փայլուն եւ բեղուն լեզուաբան գիտնականը եղաւ Պրոֆ. Հրաչեայ Աճառեան, ծնած Կ. Պոլիս 1876-ին եւ աշակերտած Պոլսոյ Կեդրոնական Վարժարանին 1889-1893: Փարիզ մեկնած է 1895 թուին հետեւելու համար Սորպոնի Համալսարանի լեզուաբանական ընթացքին ուր բարձր գնահատուած է իր ուսուցչապետին՝ Անթուան Մէյէի կողմէ: Իսկոյն երիտասարդ գիտնականին համբաւը հասած է Գերմանիա՝ յայտնի լեզուաբան Հայնրիխ Հիւբշմանի, որ զինք Սթրազպուրկի համալսարանը հրաւիրած է իր դասախօսութիւնները ունկնդրելու:

1898 թուին Հրաչեայ Աճառեան հայրենիք վերադառնալով ուսուցիչ կը կարգուի Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանին, եւ 1909-ին կը հրատարակէ հայագիտութեան մէջ դարագլուխ բացող իր Classification des dialects armeniens գործը: Լման 50 տարի Աճառեան կը բնակի Հայաստան՝ մինչեւ իր մահը՝ 1953, մնալով Երեւանի Պետական Համալսարանի ուսուցչապետի իր պաշտօնին վրայ դասախօսելով թէ՛ Գէորգեան Ճեմարանէն եւ թէ՛ Համալսարանէն ներս, ընծայելով իր բազմաբեղուն հատորները:

«Հայերէն Լեզուի Արմատական Բառարան»ը Աճառեանի լեզուաբանական եւ բառարանագիտական գործերուն մէջ անփոխարինելի տեղ կը գրաւէ իր «Հայոց Անձնանուններու Բառարան»ի կողքին: Իր աշխատասիրութեանց մաս կը կազմեն նաեւ «Հայ Բարբառագիտութիւն», «Հայոց Լեզուի Պատմութիւն», «Հայոց Գիրերը», «Հայոց Լեզուի Լիակատար Քերականութիւնը» հմտալից եւ անկրկնելի գործերը: Անոնց մէջ «Արմատական Բառարան»ը կը հանդիսանայ հնդեւրոպական առանձին լեզուներու ստուգաբանական բառարաններու լաւագոյնն

երէն մին:

Աճառեան ինք բացատրելով իր այս մեծ գործին բնոյթը, կ'ըսէ թէ բառարանի ամէն յօդուած հինգ բաժիններու վերածած է, որոնցմէ առաջինը եղած է բառագիտութիւնը՝ արմատ, հոլովում, նշանակութիւն, վկայութիւններ, ածանցներ եւ տարբերակներ: Իսկ երկրորդ բաժինը եղած է ստուգաբանութիւնը, որ «Բառարանիս հիմնական եւ կարեւորագոյն մասն է», կ'ըսէ: Այս մարզին մէջ Աճառեան գերազանցած է նախորդ լեզուաբանները եւ կարողացած է հաւաքել ստուգաբանելի բառերը, զանոնք լրացնելով ու կատարելագործելով: Հայոց մէջ Աճառեան ըլլալով առաջնակարգ հնդեւրոպաբանը, կրցած է բառերը գիտականօրէն ստուգաբանել հայերէն լեզուի յատուկ հնչիւնական օրէնքներուն հիմամբ:

Ըստ այնմ, իր այս հսկայ գործին մէջ, նախ ձեռագրատիպ եւ ապա չորս ծաւալուն հատորներով տպուած Երեւանի Պետական Համալսարանին կողմէ, բովանդակած հայերէն ստուգաբանուած բառերու թիւը հասած է 5062-ի, որ ինքնին կը վկայէ այն մասին թէ հետզհետէ ան կարողացած է հայերէն լեզուի ստուգաբանութեան լիակատար հաւաքածոն պատրաստել միշտ նկատի ունենալով հետզհետէ զարգացող տարբեր գաւառաբարբառները:

*ԳՈՐԾԻՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԴԱՍԱՒՈՐՈՒՄԸ*

Իր գործը սկսած է դասաւորեալ կերպով: Նախ բառերու ծագումի պատմութենէն, եթէ բնիկ են եւ կամ փոխառեալ, որոնցմէ առաջինները մեզի ժառանգ մնացած են ուղղակի հնդեւրոպական նախալեզուէն եւ կազմած հայերէնի նախնագոյն տարերքը: Իսկ փոխառեալ բառերը ըստ Աճառեանի մի քանի տեսակ են. «Կան փոխառութիւններ իրանական հին եւ նոր լեզուներից, ասորերէնից, խալդերէնից, վրացերէնից եւ լատիներէնից»:

Ապա, գիտնականը չորս այլ խումբեր եւս կը կազմէ, բնաձայն, հայակերտ, անստոյգ եւ աղճատուած ձեռագիր բառերու, որոնք «նորագիւտ լաւագոյն ձեռագրերի ընթերցմամբ կամ բանասիրական քննութիւններով փոխուած կամ ջնջուած են»: Հայ հին մատենագիրներու ստուգաբանութիւններուն ընծայած է յատուկ քննութիւն որոնց «մեծագոյն մասը գիտական ճշմարտութիւն ունին» կ'ըսէ, բացայայտելով մատենագիրներուն հայերէն լեզուի նկատմամբ ունեցած հմտութիւնն ու բառերու կիրակումի ճշգրտութիւնը: Լաւագոյն օրինակը անոնցմէ կարելի է յիշել Եզնիկ Կողբացիի «Եղծ Աղանդոց» երկը ուր գրաբարը գերազանցօրէն կը փայլի իր ճշգրիտ իմաստով, բառամթերքով եւ մեկնաբանութեամբ:

Չորրորդ բաժինը հայ լեզուի գաւառական ձեւերն են եղած ուր Աճառեան դասաւորած է իւրաքանչիւր արմատի ստացած ձեւը այլազան գաւառաբարբառներու մէջ «ճամբորդելով քաղաքէ քաղաք» եւ կազմելով գաւառաբարբառներու ամբողջական բառացանկը: Հինգերորդ բաժինը կը վերաբերի հայերէն լեզուէն փոխառեալ բառերուն որ նպատակ ունի պարզելու հայերէնի ազդեցութիւնը շրջակայ օտար լեզուներու վրայ: Աճառեան դիտել կուտայ թէ մէկ կողմէն գիտնականներ զբաղեր են հայերէն լեզուի ծագումն ու զարգացումը ուսումնասիրելով, անդին, «ո՛չ մէկը չէ հետաքրքրուած թէ հայերէնն էլ ուրիշների վրայ ի՞նչ ազդեցութիւն է գործել»: Վերջապէս մեծ գիտնականը քննելով հայոց դրացի լեզուները՝ քրդերէն, եբրայեցերէն, արաբերէն եւ ասորերէն, տեսած է որ ասոնք եւս «հայերէնից բաւական ազդուած են»:

«Արմատական Բառարան»ը իսկականին մէջ հայերէն բառերու հանրագիտարան մըն է որ բազմակողմանի կերպով կը լուսաբանէ հայերէն բառերու արմատը, անոնց ծագումը, պատմութիւնը եւ ազդեցութիւնը: Ինչպէս Էդիկ Աղայեան, ինքնին նաեւ մեծ գիտնական եւ աշակերտը Հ. Աճառեանի գրած է Յառաջաբանին մէջ, «Անհնարին է պատկերացնել որեւէ բառագիտական հետազօտութիւն առանց այս Արմատական Բառարանի պարունակած նիւթերը լիովին հաշուի առնելու»:

*ՄԵՍՐՈՊԵԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ*

Հայերէն լեզուի արեւելահայ եւ արեւմտահայ բարբառները իրենց երջանիկ գոյակցութիւնը պահեցին որքան ատեն որ մեր լեզուի դասական ուղղագրութիւնը, որուն վերջին գիտնական ռահվիրան եղաւ Հ. Աճառեան, հիմքը կը կազմէր երկու ճիւղերուն: Աճառեան իր վերոյիշեալ կոթողային գործը հրատարակեց 1926-ին՝ ապակետիպ, եւ ապա յետ մահու, չորս հատորներով, Երեւանի Պետական Համալսարանը հրատարակեց զանոնք 1971-1979 թուականներուն:

Կանուխէն ըսած ըլլամ որ Աճառեան իր չորս հատորեակին մէջ գործածած է միայն Մեսրոպեան դասական ուղղագրութիւնը որով ծաղկած է արեւմտահայերէնը մինչեւ մեր ժամանակները: Հակառակ սովետական բռնատիրութեան, որուն ճնշման տակ կազմալուծուեցաւ դասական ուղղագրութիւնը, Աճառեան գրեց անվարան ու վճռական 40 էջնոց իր Ներածականը որուն մէջ ո՛չ մէկ բառ այլանդակուած է, եւ ամբողջ բառարանի հազարաւոր բառերը ստուգաբանուած են ամենայետին բացատրութիւններով՝ դարձեալ բացարձակապէս անկաշկանդ պահելով դասական ուղղագրութիւնը: Երբ մեր մեծագոյն գիտնականը այդ դիրքը բռնեց, այլեւս ուրիշ առարկութիւն որեւէ հիմք չի կրնար ունենալ:

Գիտնական Հրաչեայ Աճառեան ցոյց տուած է աշխարհին հայերէն լեզուի պատմական ընթացքը, վաւերական եւ գրաբար լեզուի հիմքերուն վրայ կառուց-

Շար.ը էջ 19

# ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ
## Արմէն Տօնոյեանի «Հայրենի Ջաւախք»




Շնորհակալութեամբ ստացած ենք Արմէն Տօնոյեանի նոր մէկ աշխատութիւնը «Հայրենի Ջաւախք» անուամբ: Գիրքը լոյս տեսած է Լոս Անճելը 2010 թուին, բաղկացած 138 էջերէ:

Հատորին մէջ հեղինակը անդրադարձած է հայ-վրացական յարաբերութիւններուն, Ջաւախքահայութեան մասնակցութիւնը Արցախեան մարտերուն: Պատմական անց ու դարձներու վերլուծութիւնները կ'ընթերցուին մեծ հետաքրքրութեամբ: Գիրքին մէջ արծարծուած նիւթերուն եւ իրադարձութիւններուն առնչուող շուրջ երկու տասնեակ նկարներ տպագրուած են սոյն հատորին մէջ:

ՍԻՍԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
SIS COMPATRIOTIC & CULTURAL SOCIETY, INC.

Ուրախությամբ Կը Ներկայացնէ

ՆԱԽԱՃԱՇ
Սիսեցիներու հետ

Կիրակի 9 Հոկտեմբեր, 2011
կ.ա. ժամը 10:30-ին

Գալայճեան ընտանիքի բնակարանէն ներս
5079 Zelzah Ave, Encino, CA 91316

* Միջերկրականեան-Հայկական Նախաճաշ
* Նարտիի Մրցաշարք
* Պլօթի Մրցաշարք

Մուտքի նուէր՝ $10

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել.

| | | | |
|---|---|---|---|
| Էլօ Յատտատեանին | 562-697-1927 | Մկրտիչ Աչապահեանին | 818-705-5966 |
| Արփի Կիտցինեանին | 626-796-9414 | Արփի Գիզիրեանին | 818-430-6708 |
| Սարգիս Ռաֆայէլեանին | 818-429-9272 | Անգինէ Ցակոբեան | 818-325-9298 |
| Յարրի Նուրիանին | 310-600-6962 | Աբօ Չափարեանին | 818-468-8117 |

# ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԼԵԶՈՒՆ Է

*ՍՈՒՍԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*

*Փետրուարի 16-ին կայացած երգահան Վահրամ Պետրոսեանի մամուլի ասուլիսի ընթացքում հնչեցրած որոշ տեսակէտներ դարձան թեժ քննարկումների առարկայ: Հանրութեանը յատկապէս վրդովուեցրել էր այն, որ Վահրամ Պետրոսեանը նշել էր, թէ ատրպէյճանական երաժշտութիւնն իր էութեան մի մասն է կազմում: Այս կապակցութեամբ Վահրամ Պետրոսեանը տուել է իր պարզաբանումը, սակայն փորձենք վերլուծել խնդրի արմատներն ու ծագումնաբանութիւնը՝ հիմնուելով պատմական, գիտական եւ հոգեբանական «յամառ» փաստերի վրայ:*

*Մէջբերում Վ. Կուշնարենկո-Սուրտաեւի «Երաժշտութիւն» գիտական ծաւալուն աշխատութիւնից. «Բոլոր ժամանակների իմաստունները երաժշտութիւնը համարել են սրբազան արուեստներից մէկը: Հենց երաժշտութեան մէջ կարելի է ընկալել տիեզերքի պատկերները: Ոլորտների (սֆերաների) երաժշտութիւնը երաժշտութեան օրէնքն է, որը գործում է ողջ տիեզերքում: Այն նաեւ կոչւում է կեանքի, ներդաշնակութեան, համաչափութեան, հաւասարակշռութեան եւ ճակատագրի ուղղորդման օրէնք:*

*... Բայց պէտք է իմանալ, թէ ինչպիսին է երաժշտութիւնը: Երաժշտութեամբ կարելի է բժշկել մարմինը, ապրել հոգեւոր զարգացում, նոյնիսկ սրտի մօտ դրուած բարձրորակ հոգեւոր երաժշտութեան սկաւառակը դրական ազդեցութիւն ունի նեարդային համակարգի վրայ: Նոյնքան կործանարար ազդեցութիւն կարող է ունենալ անորակ երաժշտութիւնը... Իւրաքանչիւր մարդ, անկախ իր իմացութիւնից այդ մասին, հակում ունի որոշակի երաժշտութեան հանդէպ: Հենց այն էլ հանդիսանում է նրա կենսական զարգացման, հոգեւոր դրսեւորման, մտքի եւ զգացմունքների արտայայտութիւնը»:*

*Թերեւս դժուար է գերագնահատել երաժշտութեան դերը, նշանակութիւնն ու տիեզերական առաքելութիւնը մարդու կեանքում: Այժմ անդրադառնանք մէկ այլ ուսումնասիրութեան:*

*Ի՞նչն է կանխորոշում մարդու երաժշտական նախասիրութիւնները: Գալիֆորնիայի Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր Ռիչըրդ Կլայնը այս թեմային նուիրուած հետազօտութիւնում առանձնացնում է երեք հիմնական գործօն՝*

*1) Երաժշտական կրթութիւնն ու զանազան ներգործութիւնները,*

*2) Մշակոյթն ու սոցիալական կապերը,*

*3) Ռասայականութիւնն ու գեները:*

*Նրա համոզմամբ, երաժշտական նախասիրութիւնները մեծամասամբ պայմանաւորուած են դաստիարակութեամբ ու մթնոլորտով, որում ձեւաւորւում է անձը: Անփորձ ունկնդիրը երբեք չի տարբերակի Բիլ Էվանսի կատարումները, ասենք, Քեյթ պարեթի կատարումներից, եթէ նա չի դաստիարակուել ջազային երաժշտութեան մթնոլորտում: Ռիչարդ Կլայնն արձանագրում է նաեւ, որ այսօր նոյն ջազի տարածումն ու զարգացումը 60-ականների համեմատ զգալիօրէն նուազել է: Պատճառներից մէկն այն է, որ այս ժանրի երաժշտութիւնը պահանջում է որոշակի պատրաստուածութեամբ ինտելեկտուալ ունկնդիր: Մինչդեռ հիփ-հոփը, ռեպը, փոփ-երաժշտութիւնը (այս շարքին կարելի է դասել նաեւ ռաբիսը եւ հեղինակը) նման պայմաններ չեն պահանջում: Ուստի ամբողջ աշխարհում մարդկանց մի մասն ընկնում է ցածրորակ երաժշտութեան ազդեցութեան տակ, քանի որ այն մատչելի է ու դիւրամարս»:*

*Սա թերեւս խնդրի երկրորդ կողմն է, ինչը հեղինակը բացատրում է ստեղծուած մշակութային մթնոլորտով ու սոցիալական պայմաններով: Սակայն պարզւում է, որ նշուածները բաւարար պատճառներ չեն մարդու երաժշտական նախասիրութիւնների ձեւաւորման համար: Ոչ պակաս կարեւոր, եթէ չասենք առանցքային դեր են խաղում անհատի ռասայական պատկանելութիւնն ու գեները: Այստեղ արդէն հիմք են ընդունուել մի խումբ գիտնականների ուսումնասիրութիւններ, համաձայն որոնց՝ «Անհատը ռասայական նշանների կրողը չէ, իսկ ռասայականութիւնը անհատների ոչ թէ հանրագումարն է, այլ համաձուլումը: Ցանկացած ռասա բաղկացած է պատմականօրէն ձեւաւորուած առանձին տարրերից, սակայն դրանք ոչ թէ անհատի փոփոխման, այլեւ պոպուլիացիայի հետեւանքն են»:*

*Ի վերջոյ, ի՞նչ է իրենից ներկայացնում «գեն» ասուածը: ԴՆԹ-ի առանձին հատուածը, որում կոդաւորուած են սպիտակուցները, ճարպերն ու ածխաջրերը կոչւում է գեն: Որոշ գեներ տարբեր միջավայրերում տարբեր կերպով են դրսեւորում իրենց: Դա թոյլ է տալիս պահպանել օրգանիզմների բազմազանութիւնն ու գոյատեւումն առհասարակ:*

*Այսպիսով՝ հիմնուելով երեք հիմնական գործօնների փոխկապակցուածութեան վրայ՝ գիտնականները համոզուած են, որ հենց գեներն են թելադրում մեր երաժշտական նախասիրութիւնները:*

*Կենսաբանական գիտութիւնների թեկնածու Ս.Բ. Պաշուտինը, իր «Տարբեր ժողովուրդների գենետիկ առանձնայատկութիւնները» աշխատութիւնում գրում է, որ ռասաներն առաջացել են աշխարհագրական տարբեր տարածաշրջանի բնակիչների մօտ գենետիկ առանձնայատկութիւնների կուտակման հետեւանքով: Քանի դեռ մարդիկ ապրում էին միասին առաջացող մուտացիաները տարածւում էին ողջ խմբում, առանձնանալուց յետոյ դրանք սկսեցին կուտակուել իրարից անկախ: Եւ այստեղ է, որ վճռորոշ դեր է խաղում «նորին գերազանցութիւն» պատմութիւնը՝ համամարդկային, ռասայական... հայոց:*

*Իւրաքանչիւր ազգ ունի ծագում, պատմական յիշողութիւն, բնօրրան: Այս յօդուածը բնաւ հայոց պատմութեան մասին չէ: Աւելորդ է յիշեցնել, թէ մեր ժողովուրդը մի քանի հարիւրամեակ ո՞ւմ լծի տակ է գտնուել, եւ ովքե՞ր են մեր սահմանամերձ հարեւանները:*

*«Ու եթէ գոյութիւն ունի որեւէ բան, որ պատկերացում է տալիս մարդկային ռասայի սկզբնական երաժշտութեան մասին, ապա դա արեւելեան երաժշտութիւնն է: Հին ժամանակներից այն եղել է սրբազան երեւոյթ արեւելքում: Քանի որ ապացուցուած է, որ հնչիւնի ֆիզիքական էֆեկտը նոյնպէս մեծ ներգործութիւն ունի մարդու մարմնի վրայ: Երաժշտութիւնն ազդում է մկանային, նեարդային համակարգերի, արեան շրջանառութեան վրայ: Բայց եւ այդ ի՞նչ ուժ է, որ այս տեսակ ներգործութիւն ունի մարդու վրայ: Ինչո՞ւ է այն ենթարկում իրեն մարմնի իւրաքանչիւր բջիջ, ազդում զարկերակի ուժգնութեան վրայ: Ձայնի մասին գիտութիւնն այսօր լայնօրէն կիրառւում է ամենուրէք՝ բիզնեսում, արդիւնաբերութիւնում, քաղաքականութեան մէջ, գովազդներում եւ այլուր՝ իբրեւ մարդու վրայ ներգործելու բացառիկ միջոց: Սակայն մեր նախնիները համոզուած էին, որ երաժշտութիւնը հոգու արթնութեան լաւագոյն միջոցն ու ամենակարճ եւ ուղիղ ճանապարհն է առ Աստուած: Ուստի անհրաժեշտ է իմանալ՝ ինչպէս «օգտագործել» այն»,- նշուած է մէկ այլ ուսումնասիրութիւնում:*

*Բոլորովին վերջերս Լոնտոնի Թագաւորական քոլեջի փորձագէտները հաստատեցին տեսութիւնն այն մասին, որ երաժշտական նախասիրութիւնները պայմանաւորուած են գեներով՝ մօտ 55%-ով: Ու փախչել այս փաստից անհնար է՝ թէ՛ հիմա, թէ՛ ապագայում: Զափազանց խորն են ժառանգականութիւնը որոշող գեները: Նրանք նաեւ նշել են, որ տարիքի եւ ձեռք բերուած կենսափորձի հետ գեների ազդեցութիւնն այս հարցում նուազում է, ինչպէս նաեւ այն հանգամանքը, որ երաժշտական նախասիրութիւնների համար «պատասխանատու» գեները, փոփոխութիւնների չեն ենթարկւում:*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան**

**ժամը 10:00-ից 12:30**

**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝

հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O.

1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104




Կազմակերպութեամբ
Թէքէեան Մշակութային Միութեան (Լոս Անճելըս)

**ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**
**ԿԻՆ ԳՐՈՂԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

*Զեկուցողներ՝*
**Սոնա Զէյթլեան**
ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ եւ կին արձակագիրներ
**Մարիա Քրիսեան**
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ եւ կին բանաստեղծներ
*Հանդիսավար՝*
**Երուանդ Գոչունեան**
*Գեղարուեստական բաժին*

**ՈՒՐԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 21, 2011**
երեկոյեան ժամը 7:30ին
**ԿԼԵՆՏԷՅԼԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ**
222 E. Harvard Avenue - Glendale
Validated parking at Marketplace parking structure
Harvard & Maryland
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

# ՆԱ ՍԻՐՈՒՄ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

**ԱՆՏՈՆԻՆԱ ՄԱՉԱՐԻ**



Երբ մտորում եմ անցեալիս շուրջ, ականաւոր մարդկանց մասին, ովքեր եղել են մեր տանը, իմ յուշերում յառնում է գրական, հասարակական եւ մշակութային գործիչ Սիլվա Կապուտիկեանի կերպարը:

Այնքան պայծառ յիշողութիւններ կան կապուած նրա փառապանծ անուան հետ: Դա շատ վաղուց էր, երբ ապրում էինք երեքով՝ երկու Գուրգէններն ու ես: Մենք երեքս էլ սիրում էինք ճանապարհ գնալ: Գարնան ուղեւորւում էինք Մոսկուա, յետոյ՝ Լիտվա: Մայիսի մէկը միշտ դիմաւորում էինք Մոսկուայում, «Մոսկուա» հիւրանոցում: Մեզ այցելում էր Սիլվա Կապուտիկեանը: Նա իր հետ ուրախութիւն էր բերում, քանզի հետաքրքիր անհատականութիւն էր:

Ռեստորանում նշում էինք Մայիսի 1-ը: Գուրգէնը կատակում էր Սիլվայի հետ, քննարկում էին գրականութեանը եւ հայերին վերաբերող հարցեր: Մի անգամ Սիլվան այսպէս արտայայտուեց. «Հայկական հարցն անլուծելի է, այն չափից աւելի բարդ է»: «Այո, - պատասխանեց Գուրգէնը, - եթէ հայ ես ծնուել, ուրեմն պէտք է տառապես: Մեզ մօտ ամէն ինչ բարդ է»:

Իրականում այդպէս էլ կայ:

Երբ Գուրգէնը դուրս գրուեց հիւանդանոցից, վիրահատութիւնից յետոյ Սիլվան եկաւ շնորհաւորելու նրան: Նա Գուրգէնին գրական, ինչպէս նաեւ համաշխարհային նորութիւնների մասին պատմեց: Ես ասացի. «Տեսնո՞ւմ էք, տիկին Սիլվա, Գուրգէնը նիհարել է, հաւի ճտի նման թուլացել»: «Իսկ մեզ համար Գուրգէն Մահարին հայ գրականութեան արծիւն է», - պատասխանեց Սիլվան: Գուրգէնը նայեց ինձ ու հպարտութեամբ ասաց. «Դէ տես»:

Սիլվայի ասած խօսքերը վիրաւորուած գրողի համար բալասանի պէս ամոքում էին նրա վիրաւորանքն ու ցաւը:

Այո՛, Սիլվա Կապուտիկեանը կարողանում էր ուրախացնել մարդուն, բարձրացնել նրա տրամադրութիւնը: Սիլվան գնահատում էր Գուրգէն Մահարուն որպէս տաղանդաւոր բանաստեղծի ու գրողի: Նա մեր ընտանիքի բարեկամն էր:

Սակայն երբ լոյս տեսաւ մօգական «Այրուող այգեստանները», Սիլվան իր խօսքն ասաց յօգուտ դաշնակների, քանզի Գուրգէն Մահարին քարկոծում էր նրանց կուսակցութիւնն ու ղեկավարներին:

Սիլվա Կապուտիկեանը շատ բանի հասաւ: Նա տեսաւ իր փառքը: Բոլորին չէ տրուած... Կանանց նա չէր սիրում, քանզի վերջիններս նախանձում եւ վնաս էին պատճառում իրեն: Բայց ինձ սիրում էր, յարգում: Ընդունում էր իմ վաստակը եւ նոյնիսկ շնորհակալութիւն յայտնեց, որ փրկել եմ հայ գրողին: Եւ երբ Գուրգէնը հեռացաւ մեզնից, Սիլվան չմոռացաւ Գուրգէն Մահարու ընտանիքին եւ օգնում էր...

Մի անգամ Սիլվան ինձ, Արփենիկ Չարենցին եւ Էմինի քոյր Ելենա Գրիգորեւնային հրաւիրեց իր մօտ, որպէսզի միասին դիմաւորենք Նոր տարին: Այնտեղ ծանօթացայ իր որդու՝ Արայիկի, հարսի եւ երկու թոռնիկների հետ, ովքեր շատ նման էին Սիլվա տատիկին: Իւրօրինակ աղջիկներ էին: Սիլվան ինձ նուիրեց լիտվերէն իր երկու գրքոյկները՝ «Քարաւանները դեռ քայլում են» եւ բանաստեղծութիւնների ժողովածուն: Կարդալով նրա բանաստեղծութիւնները՝ հասկացայ, որ սիրոյ մէջ նրա բախտը չի բերել: Շատ կանացի, ռոմանտիկ, սիրահարուող խառնուածք, ինչպէս բոլոր պոետները, սակայն սիրոյ մէջ նա յաջողութիւն չի ունեցել եւ շատ է տառապել: Ահա նրա բանաստեղծութիւնը.

Դու հեռացար...
Բայց ես գիտեմ, ես գիտեմ,
Ուր էլ գնաս, ես քեզ հետ եմ, ես կը գամ.
Քո հոգու մէջ ես այնքան շատ կամարդէն,
Որ էլ այնտեղ ուրիշների տեղ չկայ...
Ո՛չ, չես կարող, ինձ չե՛ս կարող մոռանալ...

Իսկ սիրելի գեղեցկուհի Արփենիկը նստած էր կողքիս: Տխրութեամբ ու թախիծով եմ այժմ յիշում այդ արտասովոր փոթորկոտ աղջկան: Գրեթէ ամէն օր նա լինում էր մեր տանը: Մենք սիրում էինք նրան ու «անառակ դուստր» էինք անուանում:

Անմոռաց երեկոներ էին: Սիլվան արտասանում էր իր բանաստեղծութիւնները, Արայիկը՝ Շիրազի, իսկ Ելենա Գրիգորեւնան՝ իրենը: Նա նոյնպէս բանաստեղծուհի է: Արփենիկն էլ՝ Չարենցինը: Սիլվան խնդրեց, որպէսզի կարդամ Գուրգէն Մահարու բանաստեղծութիւնները՝ գրուած սիբիրեան դաշտերում, նուիրուած Անտոնինային:

Ստիպուած էի կատարել նրա խնդրանքը:

Ինչո՞ւ ուշացար, գարուն աղջիկ,
Ինչու՞ ուշացար, վերջին կարօտ.
Ես վար եմ իջնում լերան լանջից,
Դու բարձրանում ես լոյսով այրող:

Ինչու՞ ուշացար, թեթեւ թիթեռ,
Տե՛ս, իրիկուն է, դէմը՝ գիշեր,
Անցաւ արեւը լեռան ետեւ.
Ի՞նչը մոռանալ, ի՞նչը յիշել:
Գրկել քեզ սիրով ու քաղցր լսել,
Փայել մազերդ, լոել անյուշ.
Դու չէի՞ր կարող մի քիչ շուտ գալ.
Ախ, լաւ էր երբէք, քան այսպէս ուշ:

«Ինչ հրաշալի բանաստեղծութիւն է»,- ասաց Սիլվան: «Գուրգէնը շատ էր սիրում քեզ: Շիրազն էլ իմ մասին է գրել»: «Ինձ նոյնպէս շատերն են սիրել, ես էլ եմ սիրել, բայց ոչ ոք ինձ բանաստեղծութիւն չի նուիրել»,- ասաց Արփենիկը:

«Պէտք է վստակես: Սիրելիիդ հետ միասին Սիբիրում խոզեր պահիր: Այդ ժամանակ կը գրեն»,- ասացի ես:

Շար.ը էջ 18




## ՊԶՏԻԿԻԴ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

*1) Որպէսզի պզտիկդ ուղիղ ողնաշար ունենայ, քեզի կը ներկայացնենք շարք մը գործնական քայլեր.*

** Իրեն վերաբերեալ կահ-կարասիները իր չափին թող յարմարին:*

** Զինք միշտ մարզանք կատարելու. քալել, վազել, պարել, պարանով ցատկել, լողալ, գնդակով խաղալ, եւայլն:*

** Ամրան եղանակին թոյլ տուր անոր, որ ծովափին աւազով խաղայ եւ պարտէզին մէջ զբաղի (անշուշտ նկատի առնելով անոր տարիքը եւ ցանկութիւնը):*

** Իր դպրոցական կամ մարզական պայուսակները ընտրէ կռնակին վրայ շալկուող տեսակներէն եւ ոչ թէ մէկ ձեռքով քաշուողներէն, եւ ուշադիր եղիր, որ անոնք յարմարին իր կշիռքի ծանրութեան հետ:*

** Հերթականօրէն քննել տուր անոր ողնաշարը:*

** Առանց անհոգութիւն ընելու, այս մասնագիտութեամբ բժիշկի դիմէ եթէ զգաս, թէ անոր ողնաշարին մէջ ծուռութիւն մը կայ, թէկուզ թեթեւակի:*

*2) Պզտիկներդ աղիքային անհանգստութիւններէ պաշտպանելու համար, որոնք կը բազմանան մանաւանդ ամրան եղանակին, հետեւիր հետեւեալ շատ պարզ քայլերուն.*

** Ձեռքերդ տաք ջուրով եւ օճառով լուայ ամէն անգամ երբ զինք պիտի կերակրես, շորիկը փոխես կամ իր ճաշը պիտի պատրաստես:*

** Ձեռքերդ դարձեալ լուայ, իր ձեռքերն ալ նոյնպէս, երբ դուն բաղնիք կը մտնես կամ իրեն կը մտցնես, ինչպէս նաեւ ճաշը ուտելէ առաջ եւ վերջ:*

** Եթէ պզտիկդ աղիքային բորբոքումէ տառապի, զինք հեռու պահէ իր քոյր/եղբայրներէն, ազգականներէն եւ ընկերներէն, որպէսզի չփոխանցէ անոնց:*

** Բժիշկին դիմէ եթէ ան ուրիշ ախտանշաններէ ալ տառապի, ինչպէս փսխունք, չորութիւն եւ բարձր տաքութիւն:*

*3) Նորածինդ եւ սննդական հարցերը.*

*Վերջերս ծնողներուն մօտ տարածուած է իրենց նորածին երեխային համար ընտրել «էքզոթիք» կաթի տեսակները, ինչպէս այծի կամ ոչխարի, ինչպէս նաեւ անոր բուսական տարբերակները, ինչպէս սոյայով, նուշով կամ կաղինով պատրաստուածները: Մասնագէտներ զգուշացուցած են այս հարցէն, որ կրնայ այդ նորածիններուն մօտ քալսիումի եւ երկաթի պակաս յառաջացնել, ինչպէս նաեւ պատճառ դառնալ անոնց սխալ աճման:*

*Հոս հարկ է յիշեցնել, որ նորածին երեխաներուն համար նախընտրելի է բնական ստնտուութիւնը (կարելիութեան պարագային) կամ այն պատրաստուած տեսականիները, որոնք յատկացուած են երեխային այս զգայուն հանգրուանին համար, անշուշտ նկատի առնելով մանկաբուժին տուած ցուցմունքներն ու թելադրութիւնները:*

*4) Մարզանքը անհրաժեշտ է պզտիկներուն.*

*Բրիտանական կառավարութիւնը, ծնողներուն ուղղած իր ցուցմունքներու նոր շարքով, խրատեց անոնց, որ իրենց հինգ տարեկանէն նուազ եղող պզտիկներուն նոյնիսկ խթանեն մարզանք կատարելու՝ օրական երեք ժամ շարժումի մէջ մնալով, որպէսզի անոնք պաշտպանուին գիրութենէ:*

*Գիտահետազօտող Սալլի Տէյվիս ըսած է, թէ գալով տակաւին քալել չսկսած երեխաներուն, բազմաթիւ ապացոյցներ կան, որոնք ցոյց կու տան, թէ անոնց առաջին տարիներուն ընթացքին շատ անհրաժեշտ է անոնց թոյլ տալ, որ գետինը սողան եւ խաղան:*

*Բրիտանական ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ երեխաներուն միայն 30 առ հարիւրը պէտք եղած շարժումները կը կիրարկէ, մինչ ուրիշ ուսումնասիրութիւններ իրար վերագրած են պզտիկներուն կատարած քիչ շարժումները եւ անոնց ուղեղին տկար աճումը:*

## ՏԱՐԵՑ ՄԱՐԴԸ
### ՍԵՐԳԷՅ ՇԱՀՆՈՒԲԱՐԵԱՆ
### (Նուիրուած յարգելի Ստեփանին)

Այցելեցի մի մարդու,
Որի անունն էր՝ Ստեփան,
Գամուած էր նա մի աթոռին
Ու սպասում էր աղջկան:

Բարե՛ւ, Ստեփա’ն,- բարեկա’մս,
Ո՞նց ես, լա՞ւ ես,- ասացի ես,
Ու նայեցի, փայլը կորցրած,
Չոր աչքերին՝ խեղճացած:

Թեթեւ ժպտաց ու շշնջաց.
Լա’ւ եմ, լաւ: Գիտե՞ս, անգամ,
Ինքնուրոյն եմ՝ վեր կը կենամ, կը քայլեմ:

Այնինչ, պարզուեց, որ այդ մարդու
Ցանկութիւնն էր խոր հոգու.
Անզօրութիւնը քայլելու
Մթագնել էր խելքը մարդու:

Ու ակամայ, վերյիշեցի
Տուած հարցերս մի պոէմի.
Արդեօ՞ք ծերանում է մարդ ամէն պահին՝
Տարիքն առած լինի, թէ լինի պատանի:

Այսպէս նայելով հարիւրն անց Ստեփանին,
Ես դէմ գնացի իմ վաղ գրածին.
Ու համոզուեցի, որ ամէն վայրկեանին
Մօտենում ենք մենք* մեզ սպասող մահին:

(*-տարիք առած մարդիկ)

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը
### ՍԵՐԳԷՅ ՇԱՀՆՈՒԲԱՐԵԱՆ

Ժամացոյցի անիւներն են
Մեղմ հնչեցնում՝ թիկ-թակ, թիկ-թակ
Ու պարզապէս, յիշեցնում են,
Որ թռչում է ժամանակը
Մեզնից անկախ,- շատ արագ:

Օ՝, ժամանակ.
Դու աստղերի, գիսաստղերի,
Դու երկնային ու երկրային
Համայն նիւթի ու մարդկային
Կեանքին «ծնունդ-սնունդ» տուող
Անտես, աննիւթ դու ժամանակ:

Քո էութեամբ ինչքա~ն ես թանկ,
Որպէս անսկիզբ ու անյատակ.
Ինչե~ր, ինչե~ր, որ չեն անցել
Քո գոյութեան հունի միջով,
Քո պատմութեան հոլովոյթով:

Եւ դուք վայրկեան եւ վայրկեաններ՝
Ժամանակի պարզ հաշուիչներ.
Աչք չթարթած՝ վաթսուն հաշուած,
Որ դառնում էք լի րոպէներ,
Ապա ժամեր, թռչող օրեր,
Ամիսներ ու Նոր տարիներ,
Այդպէս անվերջ՝ անթիւ դարեր,
Հազար-հազար անյայտ դարեր,
Գալիս-անցնում, անց էք կենում
Մեր այս երկրում, համակարգում,
Թէ դէպի ու՞ր, դէպի ո՞ր կէտ…

Գիտե~մ, դու’ ես յաւերժութիւն,
Դու եղե’լ ես, կա’ս, կը լինե’ս,
Որպէս անվերջ մի գոյութիւն:
Ի~նչ էլ լինի
Այս աշխարհում, թէ աստղերում,
Դու կը մնաս ամէն տեղում՝
Անհաս, անդարձ, անմեկնելի:

Օ~, ժամանակ.
Ես եկել եմ այն խորհրդին,
Որ դու նաեւ չար ես, չար.
Քո այս ամբողջ յորձանուտի
Անծայրածիր անհուն հոսքում
Լոկ «չնչին պահ», լոկ մի «անկիւն»
Թողել ես դու անզօր մարդուն.
Չէի՞ր կարող լինել քիչ գութ,
Որ մարդ ապրեր մի քիչ երկար.
Սա ազնիւ չէ քո արարքում,
Քո դրուածքում, հարցի խորքում,
Քանզի, կեանքից բան չիմացած,
Հեռանում է … Մարդն ապշած:

## ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՅՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐԸ

*Երեխաներու դաստիարակութեան գործին մէջ, ծնողքին յաճախ կ'անհանգստացնէ եւ դժուարութեան առաջ կը կանգնեցնէ անոնց կողմէ տրուած պարզ, բայց հետաքրքիր հարցումները:*

*Մեկնելով ընտանեկան մթնոլորտէն, եթէ երեխան հարցեր չ'ուղղեր ծնողքին, կը նշանակէ, թէ անոր մօտ ստեղծուած է այն կամ արդէն իրեն հետաքրքրող հարցերու պատասխանը ստացած է այլ աղբիւրներէ:*

*Երեխաները շատ ուշիմ են, անոնք կը նկատեն ամէն ինչ, ուշադրութիւնը լարած կ'ուզեն գիտնալ իրենց շրջապատող ամէն ինչի մասին, իսկ երբ զգան, որ մեծերը ինչ որ բան կը թաքցնեն, ալ աւելի կը լարեն իրենց հետաքրքրութիւնը:*

*Երեխաները, մանկական ծնունդի մասին կը հարցնեն ճիշդ այնպիսի պարզութեամբ, ինչպէս »ինչու տերեւը կանանչ է կամ երկինքը կապոյտ: Այդ պատճառով մեր տուած պատասխաններն ալ պէտք է ըլլան պարզ եւ բնական: Երբ երեխան անսպասելի, տարօրինակ հարցեր տայ, ան պէտք չէ զգայ ծնողքի վարանումը, գրգռուածութիւնը, առաւել եւս զայրոյթը: Այս պարագային կարեւոր է ծնողքի ինքնատիրապետումը եւ համբերատար վերաբերմունքը, երեխային մօտ աւելորդ հետաքրքրասիրութիւն չյառաջացնելու նպատակով:*

*Երեխան կը ծնի ինչուներու հսկայական ծարաւով, անոնք կ'ուզեն գիտնալ ամէն ինչ, անոնց համար ամէն ինչ հետաքրքրական է:*

*Երեխաներու հարցադրումներուն ծնողներէն շատերը կը պատասխանեն սաստելով »Դեռ շուտ է, տակաւին պզտիկ ես այդպիսի բաներ հասկնալու համար«: Ոմանք ալ խուսափելու համար կը յօրինեն հեքիաթներ »արագիլներու« եւ »կաղամբի« մասին, բայց այդ պատասխանները երեխային կը բաւարարեն միայն որոշակի ժամանակ, յատկապէս քաղաքի մէջ ապրող երեխային:*

*Կայ այսպիսի կատակ-պատմութիւն մը. Երբ երեխան կը հարցնէ մօրը, թէ ինչպէս ծնած է եղբայրը, մայրը կը պատասխանէ, որ »Արագիլը բերած է«, »Իսկ քոյրիկս«, «Ան ալ կաղամբի մէջէն ելած է»: Փոքրիկը կը նեղուի ըսելով՝ «Ինչ է, մեր տան մէջ, ոչ մէկը բնական չէ ծնած»:*

*Ոմանք կու տան այլ պատասխան. թէ՝ «Քեզի գնած ենք խանութէն եւ եթէ հնազանդ չըլլաս, կը վերադարձնենք եւ ուրիշը կ'առնենք»: Այս պարագային ծնողքը երեխային հարցին պատասխանելու եւ անոր հետաքրքրութիւնը գոհացնելու փոխարէն անոր մէջ վախ կը ներշնչեն, որ օր մը անոնք կրնան լքել զինք:*

*Կը հանդիպինք նաեւ դէպքերու, երբ երեխայի քոյր կամ եղբայր ունենալու ցանկութիւնը բաւարարելու նպատակով ծնողքը կը գնեն գանձանակ, ուր պէտք է փոքրիկը դրամ հաւաքէ այդ նպատակով:*

*Անխոհեմութիւն է երեխային տալ սխալ, հեքիաթային բնոյթի պատասխաններ կամ ստել: Օր մը պզտիկը անպայման շրջապատի մէջ կը տեսնէ յղի կին, կը լսէ նաեւ կցկտուր խօսակցութիւնները երեխայի մօտալուտ ծնունդի մասին եւ իմանալով ճշմարտութիւնը, կ'ապրի հիասթափութիւն եւ կը կորսնցնէ վստահութիւնը ծնողքի հանդէպ:*

*Սակայն, երբ կ'ըսենք կարելի չէ խաբել երեխաները, այդ չի նշանակեր, որ երեխաներուն պէտք է ըսել այն ամէնը, ինչ գիտեն մեծահասակները կամ մանրամասնել անոնց ծնունդի հետ կապուած մանրամասնութիւնները:*



## ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

յայտագրի կազմութեան վրայ, պիտի տեսնենք կարգ մը բացթողումներ, որոնք ժխտական անդրադարձ կը թողուն ընթերցողին վրայ:

Յատկանշական բացթողում մըն է Պր. Նախագահի կողմէ գործուած անտեսումը հայ հասարակութեան, որուն հետ հրապարակային ոչ մէկ հանդիպում նախատեսուած էր յայտագրի կազմութեան մէջ: Բացթողում մըն էր անոր խուսափումը ժողովուրդին հետ շփուելէ: Բացթողում մըն էր իր ժողովուրդին պատգամներ չտալը: Բացթողում մըն էր միշտ սահմանափակ շրջանակներու հետ շահաբեր կապի մէջ մնալու նախատրամադրութիւնը: Բացթողում էին հայ գործարարներու հետ տեղի ունեցած «փորումին՝» Հայաստանը տնտեսապէս ինքնաբաւ ցոյց տալու Նախագահին ունեցած ուռուցիկ հաստատումները, փոխանակ ցոյց տալու հոն անօրութեան մատնուած հայ ազգաբնակչութեան օգնելու հրամայականը, գործազրկութեան ցնցիչ իրողութիւնը, գոյութեան պահպանման անկարելիութեամբ բացատրուող ազգը ցնցող, ամէն օր նոր ան արձանագրող արտագաղթին: Երկար է շարքը բացթողումներու, որոնց մէջ առկայ է համայնքս յուզող սրտակեղեք այն իրողութիւնը, որ Երեւանի իշխանութիւններու եւ հայրենի ազգաբնակիչներու միջեւ գոյութիւն ունեցող ծանօթ այն վիհը, անհաղորդակցութիւնը, անհանդուրժողութիւնը եւ խտրական ոգին կը փորձուի տեղադրել նաեւ Սփիւռք աշխարհի մէջ: Պրն. Նախագահ, Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարանի նոր շէնքին բացման առիթով կատարեց հաստատում մը: Ան պատգամեց, որ «իշխանութիւնը սիրողներ կամ չսիրողներ կ'անցնին կ'երթան, բայց հայրենիքը կը մնայ»: Մեր պատգամը պիտի ըլլար այն, որ չարդարանանք լափլիսեան ճշմարտութեան կարգ անցած այդ ասացուածքով: Նախագահին հետեւողականութեամբ, մեր թելադրութիւնը պիտի ըլլար մեր իշխանութիւններուն՝ գործել այնպէս, որ վերջ գտնեն անօրինութիւնները, կամայականութիւնները, հակաժողովրդավարութիւնը, կաշառակերութիւնը, խտրականութիւնը: Գործել այնպէս որ առաջքն առնուի չքաւորութեան, գործազրկութեան, արտագաղթին: Աշխատիլ այնպէս, որ Գերիշխող դառնայ ընդհանրական շահը: Զօրանայ ներազգային գործակցութեան ոգին, միաբանութիւնը: Վստահիլ սեփական ուժերուն՝ մերժելով ամէն ձեւի ենթակայութիւն: Ասոնք են ազգի մը զօրացման, բարգաւաճման եւ լինելիութեան գրաւականները եւ նաեւ՝ հիմնական պայմանները, որ հայ իրականութենէ ներս հայրենի իշխանութիւնները չսիրող չմնայ հայրենիքէն թէ Սփիւռս աշխարհի մէջ, այլապէս, զիրենք սիրողներու եւ չսիրողներու մեկնումով՝ ապահովաբար կրնայ եւ հայրենիքը վտանգուիլ:

Այո՝ Պրն. Նախագահ, այս է ճշմարտութիւնը եւ անկէ բխող իրողութիւնները: Մեր ակնկալութիւններու լոյսի տակ՝ Ձեզի կը մաղթենք բարի վերադարձ Մայր Հայրենիք:

## ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՅՍՏԱԿ ԵՆ

*Շարունակուած էջ 2-էն*

որոնք պիտի կատարուեն առաջիկայ երեք ամիսների ընթացքում, ու միաժամանակ հասկացրեց, որ այդ պահանջների մի մասի կատարման դէպքում անգամ լրջօրէն կը մօտենայ իշխանութիւնների՝ փոխզիջման գնալու պատրաստակամութեանը: Մի խօսքով, «մենք մեր անելիքն անում ենք ու անելու ենք, բայց դուք դեռ երկխօսութեան շանս ունէք»: Ընդորում, վերջնական յստակեցումը պիտի տեղի ունենայ «Սեպտեմբեր-Հոկտեմբերին», այսինքն՝ գործնականում վերջնաժամկէտը մէկ ամիս է:

Ի դէպ, սա չի նշանակում, թէ այդ մէկ ամսուայ ընթացքում իշխանութիւնները պիտի գիշեր-ցերեկ մտածեն՝ կատարո՞ւմ են կոնգրէսի պահանջները, թէ ոչ (դրանցից մէկ-երկուսը նրանք կարող են կատարել թէկուզ հենց վաղը): Դա նշանակում է, որ մէկամսեայ ժամկէտն առաջին հերթին հենց կոնգրէսի առջեւ է դրուած: Կը կարողանա՞ն մէկ ամսուայ ընթացքում համաժողովրդական շարժումը հասցնել այնպիսի պիկի, որ իշխանութիւններն անվերապահօրէն կատարեն բոլոր պահանջները՝ ուրեմն ժողովուրդը յաղթել է, չեն կարողանայ՝ ուրեմն պէտք է աւելի ինտենսիւ աշխատել: Այսինքն, մեծ հաշուով, հանգուցալուծումը ժողովրդի ակտիւութիւնից է կախուած: Ժամկէտը յստակ է. Սեպտեմբեր-Հոկտեմբեր: Ձեւերն ու նպատակները յստակ են: Մնում է մեր ակտիւութիւնը:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

## ՆԱ ՍԻՐՈՒՄ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

*Շարունակուած էջ 1-էն*

Ահա այդպէս անցկացրինք այդ երեկոն հանրաճանաչ Սիլվա Կապուտիկեանի տանը:

Տարիներ անցան: Եւ ահա Հայաստանում ծանր օրեր սկսուեցին: Պատերազմ Ղարաբաղում: Երեւանում ո՛չ լոյս կայ, ո՛չ հաց: Շուրջը խաւար, թախիծ: Գուրգէնչիկը՝ իմ մեղմ ուղեկիցը, լռելեայն տանում էր բոլոր դժուարութիւնները:

Բայց մի օր չդիմացաւ ու ասաց. «Մայրի՛կ, հնարաւոր չէ՞ ինչ-որ տեղից հաց գտնել: Շատ եմ ուզում ուտել: Քաղցած եմ...»: «Կ'աշխատեմ»: Սկսեցի բարի մարդ փնտռել, ով կ'օգնէր մեզ: Գտայ փրկարարին: Զանգում եմ. «Տիկի՛ն Սիլվա, Գուրգէնչիկը հաց է ուզում«: «Արի»,- պարզապէս ասաց: Գնացի: Ընդունեց, հիւրասիրեց (խոստովանում եմ, ես նոյնպէս քաղցած էի...): Զրուցեցինք, յիշեցինք Գուրգէն-խանին: Սիլվան այն ժամանակ իր ուժերի ծաղկուն շրջանում էր:

Ինչպէս միշտ՝ սիրալիր ու բարի: Նա ինձ 100 տոլար տուեց: Այն ժամանակ դա մեծ գումար էր: Մի մեծ տուփ կոնֆետ գնեցի:

Երջանիկ տուն վերադարձայ: Տէր Աստուած: Ինչ խնճոյք կազմակերպեցինք Գուրգէնչիկի հետ: Ինչ բարի է Սիլվան:

Ինչ մարդասէր: Շնորհակալութիւն:

Շատ շնորհակալութիւն:

Ինչ-որ մէկը մեղադրում է Սիլվային, որ նա գովերգել է խորհրդային կարգերը, գովաբանել է եւ, լինելով արտասահմանում, քարոզել է Խորհրդային Միութիւնը:

Բայց նա գովում էր միայն այն, ինչն արժանի էր գովասանքի: Գուրգէնը յաճախ էր ինձ ասում. «Անտոնի՛նա, եթէ այդ անիծեալ չեկիստները, սադիստները չլինեն, սովետական կարգերը լաւագոյնն են: Տեսնո՞ւմ ես, գրականութիւնը ծաղկում է, ինչպէս նաեւ արուեստը, երաժշտութիւնը, գիտութիւնը: Բժշկութիւնն անվճար է, ուսուցումը՝ նոյնպէս, եւ շատ ու շատ այլ լաւ բաներ կան խորհրդային կարգերի մէջ...»:

Ցաւօք, այսօր մեզ մօտ չես գտնի... Դա ԽՍՀՄ-ի մի կողմն է, իսկ միւսը՝ դաժան, արիւնոտ, անհոգի: Այն ոչնչացրեց տարբեր ազգերի միլիոնաւոր լաւագոյն մարդկանց: Չեկիստներին, ամբաստանիչներին, մատնիչներին մեծ արտօնութիւններ էին տրուած: Ծախուած հոգու դիմաց նրանք հոնորարներ էին ստանում: Այդ ահաբեկչութիւնը, բռնակալութիւնը Սիլվան արհամարհում էր, ատում, բայց ստիպուած լռում էր: Նա դաշնակի դուստր էր, այն էլ ոչ թէ շարքային, այլ՝ Ֆրանսայում Դաշնակցական կուսակցութեան ղեկավարի: Նա դիւանագէտ էր...:

Սիլվա Կապուտիկեանը ապրել գիտէր եւ կարողացաւ արժանավայել հեռանալ կեանքից...

«Վերջին զանգ» գիրքը գլուխգործոց է: Այն հանրագումարի է բերում իր ամբողջ կեանքը: Այնտեղ ամէն ինչ կը գտնես՝ եւ՛ փիլիսոփայութիւն, եւ՛ հոգեբանութիւն, սէր, տխրութիւն, թախիծ, հիասթափութիւն: Ինչ տիպական է նա գրում.

«Ես բարձրանում եմ, բարձրանում լերան վրայով եւ հասած Արարատի գագաթին: Յետոյ սկսեցի իջնել: Իջնում եմ դանդաղ, դանդաղ: Եւ ահա արդէն Արարատ լերան ստորոտին եմ: Նայում եմ, արդեօ՞ք հետքերս թողել եմ...»:

Այո՛, իր հետքերն այս ականաւոր կինը թողել է, եւ ոչ ոք, ո՛չ մարդիկ, ո՛չ ժամանակը չի կարող մաքրել Սիլվա Կապուտիկեանի հետքերը, որ նա թողել է Հայաստանում՝ իր հայրենի հողի վրայ:

Ամէն մէկը չէ, որ հասել է Արարատի գագաթին: Իսկ Սիլվային յաջողուեց...

Սիլվա Կապուտիկեանը, ինչպէս արդէն գրել եմ, գրական, հասարակական եւ մշակութային գործիչ էր, բայց ամենագլխաւորն այն է, որ նա մեծատառով Մարդ էր:

Ապրում էր ոչ միայն իր համար, այլեւ շատերին էր օգնում: Իսկ ինչպէս էր հոգ տանում հարազատների մասին:

Սիլվան նահապետ էր: Նա սիրում էր իր Հայաստանը, մայրենի լեզուն:

Հրաշալի բանաստեղծութիւն է գրել՝ «Հայոց լեզուն»:

«Վերջին զանգը» Սիլվան նուիրել է մեզ հետեւեալ մակագրութեամբ. «Ականաւոր գրող Գուրգէն Մահարու տուն-թանգարանին:

Շնորհակալութիւն Բարի Հրեշտակ տիկին Անտոնինային, որ պահում է հայ դասականի յիշատակը»:

Սիլվա Կապուտիկեան
16.03.2006թ.

Պայծառ յիշատակ քեզ, անմոռաց, բարի Սիլվա: Քո գործերն անմահ են: Հայաստանը յիշում է Սիլվա Կապուտիկեան փառապանծ անունը:

Ա. Մահարի
1.08.2011թ.
Երեւան

Որքան շատ տարիներ անցնեն, այնքան աւելի բարձր կը հնչի Հայաստանի հանրայայտ դստեր անունը:

Ես ուրախ եմ, որ Սիլվա Կապուտիկեանի թանգարանը հարազատ մարդու՝ Ալիզանեանի զարմուհու ձեռքերում է, ով 12 տարի խնամել է Սիլվային: Այնպէս, որ նա կը կարողանայ պահպանել իր հանրայայտ քրոջ գրական արժէքները:

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Ընկ. Գէորգ Թաւուքճեան «Մասիս» թերթի բարգաւաճման ֆոնտին կը նուիրէ $200 տոլար: Շնորհակալութեամբ ստացանք:

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողներէն Պրն. Մկրտիչ Կիրակոսեան կը նուիրէ $50 տոլար «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Մի ոմն գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնը, կը նուիրէ $100 տոլար:



## ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*խնայեր զայն հասցնելու կատարեալին:*

*Այս մտահոգութեամբ արդէն իսկ դպրոցէն ներս կազմակերպուած է հետեւեալ հանդանակային թէ մշակութային ձեռնարկները,*

*- Շաբաթ, Հոկտեմբեր 1ի երեկոյեան Հ. Ք. Վարժարանի աւանդական ընտանեկան ընթրիքը:*

*- Շաբաթ, Հոկտեմբեր 15ին առաջին հանգանակային քայլարշաւը, որուն համար հրաւիրուած է հայ դպրոցի առաքելութեան հաւատացող իւրաքանչիւր հայորդի, որպէսզի իր լուման ձգէ, քաջալերէ եւ զօրակցի այս նուիրական աշխատանքին:*

*Յաւելեալ մանրամասնութեան համար կարելի է դիմել asamontrose.com կայքէջին:*

*- Շաբաթ, Հոկտեմբեր 22ին Մշակոյթի ամսուան փառատօն, յայտագրի գործադրութիւն բոլոր աշակերտներու մասնակցութեամբ՝ թատրոն, պար, երգ եւ տարազներու ցուցադրութիւն: Հայկական ճաշեր, խաղեր եւ մրցանակներ տակաւին զանազան անակնկալներ:*

*Հրաւիրուած է Գալիֆորնիոյ հայ համայնքը, դուք էք տէրը այս կրթօճախներուն սիրելի հայորդիներ եկէ՛ք, տեսէ՛ք, վայելեցէ՛ք հաճելի միջոցառումները, հայկական պարզ եւ հարազատ մթնոլորտի մէջ եւ քաջալերեցէք հայ պատանիները:*

*Բոլոր աշխատանքներու կիզակէտը հայ պատանին է, որ մեծապէս կը նպաստէ հայապահպանման անժամանցելի աշխատանքին:*

---

## ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 30-ԱՄԵԱԿ

*Շարունակուած էջ 8-էն*

*կան նորմաներին:*

*Սարոյեանի լաւագոյն դրամատիկական գործերն են՝ «Իմ սիրտը լեռներում է», «Կեանքիդ ժամանակը», «Քարանձաւի բնակիչները», «Հէ՜յ, ով կայ այդտեղ», «Մանկանց կոտորածը», «Խաղողի այգին»:*

*1942 թւականին Սարոյեանը զօրակոչուել է բանակ, աշխատել է զինուորական սցենարների ստեղծման վրայ, սկզբում՝ ԱՄՆ-ում, ապա, աւելի քան մէկ տարի՝ Լոնդոնում: Սարոյեանը պատերազմն ընկալել է որպէս զարհուրելի աղէտ՝ մարդկութեան համար եւ այդ թեման արտացոլել «Մարդկային կատակերգութիւն» վիպակում եւ «Վեսլի պակստնի արկածները» վէպում:*

*1950-1960-ական թւականներին Սարոյեանը երկար ժամանակ ապրել է Եւրոպայում, գերազանցապէս՝ Փարիզում, ապա նորից հաստատուել ԱՄՆ-ում: Այդ տարիներում նա ստեղծել է հոգեբանական վիպակների շարք («Ինչ-որ ծիծաղելի բան», «Հայրիկ, դու խենթ ես», «Մայրիկ, ես սիրում եմ քեզ», «Տղաներ եւ աղջիկներ», «Մէկ օր յետկէսօրեայ աշխարհում»):*

*1960-ական թուականներից սկսած՝ Վիլիամ Սարոյեանը գլխաւորաբար գրել է քնարական-ինքնակենսագրական, յուշագրական ժանրի գործեր («Ահա եկաւ, ահա գնաց, ինքներդ գիտէք ով», «Ջմեռնել», «Նամակներ՝ Թէյլբու փողոցի 74 համարից», «Վայրեր, որտեղ ես եղել եմ», «Պատահական հանդիպումներ»):*

*Անգլօ-ամերիկեան գրական մամուլը միշտ արձագանգել է Սարոյեանի ստեղծագործութիւններին, տպագրել դրանց նուիրուած յօդուածներ ու գրախօսութիւններ: Գրողի երկերը ճանաչում են գտել ամբողջ աշխարհում եւ թարգմանուել շատ լեզուների:*

*Վիլիամ Սարոյեանը առաջին անգամ Խորհրդային Հայաստան է այցելել 1935 թւականին: Այնուհետեւ՝ 1960, 1976 եւ 1978 թւականներին: Մեծ հետաքրքրութիւն է ցուցաբերել Հայաստանի կեանքի ու մշակոյթի նկատմամբ:*

*Խորհրդային Հայաստանում սահմանուած «Խաղաղութեան պահպանման եւ հայրենիքի հետ կապերի պահպանման ուղղութեամբ ակտիւ գործունէութեան համար» մրցանակի առաջին դափնեկիրն է (յետմահու):*

*Համրագիտարանից քաղեց եւ կազմեց Շ.-ը*

---

## ՊՐՈՖ. ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*ուածքը, հաստատելով որ մեր լեզուին քերականութիւնն ու ուղղագրութիւնը իրենց սկիզբը առած են գերագոյն եւ գերազանց «Դասագիրք»էն՝ Աստուածաշունչ Մատեանէն, ուր արձանագրուեցաւ հայերէն լեզուն, որ մինչ այդ միայն բերանացի էր, իր կատարեալ կառոյցով Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի պատրաստած առաջին աշակերտներով՝ Թարգմանիչ Վարդապետներով:*

*Երբ 16-րդ դարու Վերածնունդի Շրջանէն ետք հայերէն լեզուն երկու ուղղութեամբ ընթացաւ, եւ արեւելահայերէնը Թիֆլիսի եւ Հայաստանի սահմաններէն ներս արմատացաւ, արեւմտահայերէնը Կ. Պոլսոյ եւ արտասահմանի մէջ զարգացաւ, երկուքն ալ հաւատարիմ մնալով «Մեծ Գիրքին»՝ Աստուածաշունչին դասական լեզուի կառոյցին՝ քերականութեան, բառամթերքին եւ դասական ուղղագրութեան, մինչեւ 1917-ի ռուսական յեղափոխութեան յաջորդող Սովետական կարգերու հաստատումը, որմէ ետք արեւելահայերէնը մոլորեցաւ եւ իր կառոյցին մէջ խախտեցաւ:*

*Հայերէն լեզուի հիմնաքարը եթէ Ս. Մեսրոպ Վարդապետ եւ Ս. Սահակ Հայրապետ կառուցին, անոր պատմական ընթացքը ստուգապէս վերահաստատեց Հ. Աճառեան: Որքան կը պարտինք հայերէն գրաւոր եւ գրական լեզուի հիմքը Թարգմանիչ Վարդապետներուն եւ յաջորդող պատմագիրներուն՝ Մովսէս Խորենացիէն մինչեւ Առաքել Դաւրիժեցի, նոյնքան կը պարտինք մեծ լեզուաբան Հրաչեայ Աճառեանին արդի հայերէնի կատարեալ կառոյցը՝ հաւատարմօրէն շարունակուած իր դասական ուղղագրութեամբ:*

---

## ԱՌԱՋԸ ՋՈՒՐ, ՅԵՏԵՒԸ ՍՈՒՐ

*Շարունակուած էջ 13-էն*

*կոչուէր...*

*Քաղաքների ու գիւղերի սոցիալական ծանր կացութիւնը, իրաւական դաշտի անկատարելիութիւնը, անիշխանութիւնը, ամենաթողութիւնը, կաշառակերին, վաղուայ օրուայ հանդէպ անյոյս վիճակը, էլի՞ թուեմ... այս գործօններն են, որ անմիջականօրէն նպաստում են հային իր սեփական երկրից հիասթափուելու, օտարուելու, երկիրը լքելու...*

*Այնպիսի պայմաններ պէտք է ստեղծուեն, որ բոլոր սփիւռքահայերը անխտիր կամովին ուզեն Հայաստանի վերադառնալ, անկախ «Արի Տուն» ծրագրից, բայց կարծես թէ կանխամտածուած, ծրագրուած է այս աննախադէպ արտագաղթը, որ Հայաստանը դատարկուի, որ գնացողները ժամանակի ընթացքում ձուլուեն օտարների մէջ եւ այլեւս հայ չմնայ երկրի երեսին, եթէ մեր իշխանութիւնները արմատկաան լուծումներով չկանխեն, արտագաղթն իր սեւ գործն անելու է, այսինքն անելու է այն, ինչ երազել են մեր թշնամիներն առ այսօր, բայց չեն յաջողել:*

*Արտագաղթը կանխող ազգային ռազմավարութիւն պիտի մշակուի, նման մեթոդներով արտագաղթ չեն կանխում, «Արի Տուն» ծրագիրն էլ այսպէս չեն կեանքի կոչում պարոնա՛յք ազգընտիրներ. ստի վրայ տուն չեն կառուցում. ստի ոտը կարճ է:*

*«Նոր Օր»*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ------------------------------------------

**Address:** ---------------------------------------

**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------

**Country:** -------------

**Tel :**----------------------- **Fax :** ------------------------

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |


90th Anniversary
90
Հ.Մ.Մ.
HOMENMEN
1921
Ճաշկերոյթ
Պարահանդէս
Նուիրուած
Հ.Մ.Մ.ի 90 Ամեակին
կազմակերպութեամբ
Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան
Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ
յատուկ Լիբանանէն ժամանած, սիրուած երգիչ՝
Պերճ Նազգաշեան
Տեղի կ'ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 26, 2011
երեկոյեան ժամը 8:30 էն սկսեալ
Deluxe Banquet Hall
Շքեղ սրահէն ներս՝
237 East Olive Avenue, Burbank, CA 91502
Մանրամասնութեան համար հեռաձայնել
(626) 485-6434 (818) 324-057
Մուտքի Նուէր $ 75.00